


ԵՕՁԵՄԵՐԻՆ ԷՍԲԻՒՎԱ

# ԱՏԾՈՅ ՀԵՏ ՄՏԵՄՄՈՒԹԻՒՆԸ

*Երկու քարոզ աղօթքի մասին*



*Թարգմանեց՝*

ՄԱՇՏՈՅ ՎԱՀԷ ՂԱԶԱՐԵԱՆ

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

*Սիրելի Ընթերցող,*

*օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց Նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:*

*Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստուծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.*

**[gradaran@mashtoz.org](mailto:gradaran@mashtoz.org)**

*Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:*

*Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խնդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:*

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,  
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

*Օ<sup>3</sup>βi áó ì<sup>3</sup> Ñ̇ Ô<sup>3</sup>¼<sup>3</sup> ñ»<sup>3</sup>Ý*

Սուրբ Եօզէմարիա Էսքրիվան ծնունել է Բարբասթրոյում (Հուէսքա, Իսպանիա), 1902թ. Յունուարի 9ին: 15ից 16 տարեկան հասակում սկսում է նշմարել աստուածային կոչման առաջին նախազգացումները եւ որոշում է քահանայ դառնալ: 1918ին, Լոզրոնիոյի ձեմարանում սկսում է եկեղեցական ուսումները, իսկ 1920ից դրանք շարունակում է Սարագոցցայի «Փառլայի Աբ. Ֆրանչիսկոս» ձեմարանում, ուր 1922ից սկսած վարում է "Մեծաւորի" պաշտօն: 1923ին, եկեղեցական Մեծաւորների արտօնութեամբ, սկսում է իրաւաբանական ուսումները Սարագոցցայի Համալսարանում, առանց աստուածաբանական ուսումները դրանց պատճառով տկարացնելու: Սարկաւագ է ձեռնադրուում 1924թ. Դեկտեմբերի 20ին, իսկ քահանայ՝ 1925թ. Մարտի 28ին:

Քահանայական ծառայութիւնը սկսում է Փերդիգուէրայի ժողովրդապետութիւնում – Սարագոցցայի թեմ – շարունակելով ապա ինքնին Սարագոցցայում: 1927թ. դարնանը, ինչպէս միշտ՝ Արքեպիսկոպոսի արտօնութեամբ, տեղափոխուում է Մադրիդ, ուր նուիրուում է քահանայական անխոնջ աշխատանքի, բոլոր միջավայրերում, ծառայելով նաեւ արուարձանների աղքատներին ու հիւանդներին, յատկապէս հիւանդանոցներում գտնուող անբուժելիներին ու մահամերձներին: Դառնում է Սուրբ Սրտի Առաքելական Տիկնանց կազմակերպութեան կողմից հիմնուած Հիւանդախնամ Ընկերութեան մատուանապետ, եւ դասաւանդում է մի համալսարանական Կաճառում: Միաժամանակ շարունակում է Իրաւաբանութեան մէջ վարդապետական աստիճան ստանալու համար հարկաւոր ուսումներն ու դասընթացքները, որոնք այդ ժամանակ կատարուում էին միայն Մադրիդի Համալսարանում:

1928թ. Հոկտեմբերի 2ին Տէրը նրան յստակ կերպով ցոյց է տալիս այն՝ ինչ մինչ այդ նա միայն կանխազգացել էր: Եւ Հոգեշնորհ Եօզէմարիա Էսքրիվան հիմնում է «Օպուս Դէյ»ը: Ինչպէս միշտ՝ Տիրոջ կողմից մղուած, 1930թ. Փետրուարի 14ին Օպուս Դէյի առաքելական գործունէութիւնը սկսում է կանանց հետ: Այդպիսով, եկեղեցու գրկում բացուում էր մի նոր ճանապարհ, որի նպատակն է զարկ տալ, հասարակական բոլոր խաւերի անձանց մէջ, սրբութեան փնտռութիւն եւ առաքելական գործունէութեանը, շնորհիւ աշխատանքի սրբագործման, աշխարհի ներսում եւ առանց սեփական կեանքի վիճակը փոխելու:

Այդ 1928թ. Հոկտեմբերի 2ից սկսած, Օպուս Դէյի հիմնադիրը բոլոր հոգիների նկատմամբ առաքելական մեծ եռանդով նուիրուում է կատարելու առաքելութիւնը, որն Աստուած յանձնել էր իրեն: 1934ին նշանակուում է Աբ. Եղիսաբէթի անունը կրող Բարեգործական հաստատութեան Տեսուչ: Իսպանիայի քաղաքացիական պատերազմի տարիներին իր քահանայական պաշտօնը վարում է նախ Մադրիդում – յաճախ իր կեանքը ծանրօրէն վտանգի ենթարկելով – իսկ յետոյ՝ Բուրգոսում: Այդ ժամանակ արդէն երկարատեւ ուժգին հակառակութիւններ է կրում, որոնց համբերում է հանդարտ սրտով եւ գերբնական ոգիով:

1943թ. Փետրուարի 14ին հիմնում է Սուրբ Խաչի քահանայական Ընկերութիւնը, որն անբաժանելիօրէն միացած է Օպուս Դէյին եւ, Օպուս Դէյի աշխարհական անդամներին քահանայական ձեռնադրութիւն ստանալու եւ նրանց թեմական պատկանելութիւնը Գործի ծառայութեանն ի նպաստ կատարելու հնարաւորութիւն ընձեռելուց բացի, աւելի ուշ հնարաւորութիւն էր տալու թեմական քահանաներին նոյնպէս մասնակցելու Օպուս Դէյի հոգեկանութեանն ու հոգեւոր կեանքի գործնական հրահանգումների համակարգին, իրենց քահանայական կեանքի պարտաւորութիւնների կատարման մէջ փնտռելով սրբութիւնը, թեմական Առաջնորդի բացարձակ իրաւասութեան ներքոյ մնալով հանդերձ:

1946ին տեղափոխվում է Հոռոմ, ուր հաստատվում է մինչև իր կեանքի վերջը: Հոռոմից խթանում եւ դեկավարում է Օպուս Դէյի տարածումն ամբողջ աշխարհով մէկ, գործի դնելով իր բոլոր ուժերը՝ Գործին անդամակցած արանց եւ կանանց տալու համար ուսմունքային, հոգեւոր եւ առաքելական հաստատահիմն կրթութիւն: Հիմնադրի մահուան պահին, Օպուս Դէյը հաշուում էր 80 ազգութիւնների պատկանող աւելի քան 60.000 անդամներ:

Հոգեշնորհ Եօզէմարիա Էսքրիվան եղել է Եկեղեցական Կանոնագրքի վաւերական Մեկնաբանութեան Քահանայապետական Յանձնաժողովի եւ Կղերանոցների ու Համալսարանների Սուրբ Ժողովի Խորհրդական, Սրբազան Քահանայապետի Պատուոյ Առաջնորդ եւ հոռոմէական աստուածաբանական Քահանայապետական Կաճառի պատուաւոր անդամ, ինչպէս նաեւ՝ Նաւարայի (Իսպանիա) եւ Փրուրայի (Պեռու) Համալսարանների Աւագ Դիւանապետ:

Սբ. Եօզէմարիա Էսքրիվան մահացել է 1975թ. Յունիսի 26ին: Երկար տարիներ արդէն նուիրում էր իր կեանքը Եկեղեցու եւ Քահանայապետի համար: Թաղուած է Հոռոմում, Խաղաղութեան Տիրամայր եկեղեցու զետնափոր Դամբարանում: Օպուս Դէյի առաջնորդութեան գործում նրան յաջորդեց Հոգեշնորհ Ալվարոյ Դէլ Փորթիլլոն (1914-1994), որը, երկար տարիներ շարունակ Սբ. Եօզէմարիա Էսքրիվայի ամենասերտ գործակիցը լինելուց յետոյ, միաձայն ընտրուեց 1975թ. Սեպտեմբերի 15ին: Ներկայումս Օպուս Դէյի առաջնորդն է Հոգեշնորհ Խաւիէր Էչչվարրիան: Նա նոյնպէս տասնեակ տարիներ աշխատել է Սբ. Եօզէմարիայի եւ նրա առաջին յաջորդի՝ Հոգեշնորհ Ալվարոյ Դէլ Փորթիլլոյի հետ: Օպուս Դէյը – որ սկզբից եւեթ ստացել էր թեմական Իշխանութիւնների արտօնութիւնը, իսկ 1943ին «*appositio manus*» արտօնագիրը, եւ ապա՝ Սուրբ Աթոռի կողմից վաւերացումը – Սրբազան Քահանայապետ Յովհաննէս Պողոս Բ-ի կողմից 1982թ. Նոյեմբերի 28ին հաստատուեց որպէս Անձնական Առաջնորդութիւն: Կանոնական այս կերպն ու սահմանումն էր նախատեսել եւ փափաքել Սուրբ Եօզէմարիան:

Սրբութեան համբաւը, որն իր կեանքի ընթացքում արդէն ունէր, իր մահից յետոյ տարածուեց երկրագնդի բոլոր անկիւններով մէկ, ինչպէս ցոյց են տալիս հոգեւոր եւ նիւթական շնորհների բազմաթիւ վկայութիւնները, որոնց ընդունումը վերագրուում է Օպուս Դէյի հիմնադրի միջնորդութեանը. դրանց շարքին զբանցուած են նաեւ բժշկումներ, որոնք գիտականօրէն անբացատրելի են: Բազմաքանակ են եղել նաեւ հինգ մայրցամաքներից ստացուած նամակները, որոնց շարքին նաեւ նամակները 69 ծիրանաւորների եւ մօտ 1.300 եպիսկոպոսների – որ կազմում է կաթողիկէ աշխարհի եպիսկոպոսների մէկ երրորդից աւելին – որոնցով Քահանայապետից խնդրում էին սկսել Հոգեշնորհ Եօզէմարիա Էսքրիվայի Երանացման եւ Սրբադասման Դատավարական Ընթացքը: Սրբադասումների Դատավարական Ժողովը գործի բացման արտօնագիրը տուեց 1981թ. Յունուարի 30ին, իսկ Յովհաննէս Պողոս Բ-ը այն վաւերացրեց 1981թ. Փետրուարի 5ին:

1981 եւ 1986թթ. միջեւ տեղի ունեցան ճանաչողական երկու դատավարութիւններ, Հոռոմում եւ Մադրիդում, քննելու համար Հոգեշնորհ Եօզէմարիա Էսքրիվայի կեանքն ու առաքինութիւնները: Այս երկու դատավարութիւնների արդիւնքներին ծանօթանալով եւ ընդունելով խորհրդատու աստուածաբանների Համաժողովի եւ Սրբադասումների Դատավարական Ժողովի անդամ ծիրանաւորների ու եպիսկոպոսների Յանձնաժողովի նպատակաւ Երանաշնորհի տիտղոս: 1991թ. Յուլիսի 6ին Սրբազան Քահանայապետը հրամայեց հրապարակել Վճռագիրը, ուր յայտարարում էր հրաշագործ բնոյթը մի բժշկումի, որը կատարուել էր Երանաշնորհ Եօզէմարիա Էսքրիվայի բարեխօսութեամբ. այդ Վճռագրով եզրափակուեցին կանոնական գործընթացները, որոնք անհրաժեշտ էին

Օպուս Դէյի հիմնադրի Երանացման համար, ինչը որ տեղի ունեցաւ 1992թ. Մայիսի 17ին, Սուրբ Պետրոսի հրապարակում կատարուած հանդիսաւոր ծիսակատարութեան ընթացքում, որին նախագահում էր Սրբազան Քահանայապետ Յովհաննէս Պօղոս Բ.ը: 1992թ. Մայիսի 21ից Սբ. Եօզէմարիա Էսքրիվայի մարմինը հանգչում է Խաղաղութեան Տիրամայր առաջնորդական եկեղեցու խորանի ներքոյ, Օպուս Դէյի Առաջնորդութեան գլխաւոր կենտրոնում, տեւական կերպով ստանալով աղօթքի ու երախտագիտութեան ընկերակցութիւնը ամբողջ աշխարհով մէկ սփռուած բազմաթիւ անձանց, որոնք Աստծուն մօտեցել են Օպուս Դէյի հիմնադրի օրինակից եւ ուսուցումներից, ինչպէս նաեւ նրա բարեխօսութեանը դիմողների բարեպաշտութիւնից գրաւուած:

2001թ. Դեկտեմբերի 20ին, Յովհաննէս Պօղոս Բ. Սրբազան Քահանայապետը վաւերացրեց Սրբադասումների Դատավարական Ժողովի վճռագրերից մէկը, որը վերաբերում էր Երանելի Եօզէմարիայի բարեխօսութեամբ կատարուած հրաշքներից մէկին: 2002թ. Փետրուարի 26ին, եկեղեցական համագումարի հաւաքուած Ծիրանաւորների, Արքեպիսկոպոսների ու Եպիսկոպոսների կարծիքը ունկնդրելուց յետոյ, Սրբազան Քահանայապետը սրբադասեց Երանելի Եօզէմարիա Էսքրիվային. ծիսական արարողութիւնը տեղի ունեցաւ Հռոմում, Սուրբ Պետրոսի հրապարակում, 2002թ. Հոկտեմբերի 6ին:

Սուրբ Եօզէմարիա Էսքրիվայի գրչին են պատկանում, աստուածաբանական-կանոնական բնոյթ ունեցող «Հուլիգասի Աբբայուհին» մենագիր քննական ուսումնասիրութիւնից բացի, հոգեկանութեան մի շարք գրքեր, որոնք թարգմանուել են բազմաթիւ լեզուների. «Ճանապարհ», «Սուրբ Վարդարանը», «Յիսուսն է անցնում», «Աստուծոյ ընկերներ», «Խաչի ճանապարհ», «Եկեղեցին, մեր Մայրը», «Ակօս», «Հնոց», որոնցից վերջին հինգը հրատարակուել են յետ մահու: Միջազգային լրատուամիջոցներին տրուած հարցազրոյցների շարքը ծնունդ է տուել «Զրոյցներ Հոգեշնորհ Եօզէմարիա Էսքրիվայի հետ» հատորին:

Երկու քարոզները, որոնք այստեղ ներկայացնում ենք, ընդհանուր մի իւրայատկութիւն ունեն, որով բացատրւում է նրանց միաւորումն այստեղ. երկուսն էլ խօսում են ծիսայն աղօթքի մասին: Այժմ դրանք կրկին ներկայացւում են փափաքով, որ ընթերցողներին հնարաւորութիւն տան Սբ. Եօզէմարիայի միջոցով ըմբռնելու այն մեծագոյն կարեւորութիւնը, որն աղօթքի կատարումը կարող է ունենալ իրենց քրիստոնէական կեանքում:

## Ուրիոյի Գղեակում

Անձնական յուշերիցս մէկը կարող է որպէս նիւթի նախաբան հանդիսանալ: Առաջին անգամ, որ լսեցի «Դէպի սրբութիւն» քարոզի մասին, 1973թ. Օգոստոսի 25ին էր: Մասնակցում էի Օպուս Դէյի անդամների համար կազմակերպուած մի դասընթացքի, որն անցկացւում էր Քոմոյի լճի ափին գտնուող Ուրիոյի Դղեակ կոչուող ավանում: Սբ. Եօզէմարիան, որն յարաբերական հանգստի շրջան էր անցկացնում ոչ շատ հեռու գտնուող Չիվէնայ կոչուող բնակավայրում, եկաւ մի քանի ժամ մեր հետ անցկացնելու, ընկերակցութեամբ Հայր Ալվարոյ Դէլ Փորթիլլոյի եւ Հայր Խաւիէր Էջէվարրիայի, որն Օպուս Դէյի ներկայիս Առաջնորդն է: Նրա շուրջը հաւաքուեցինք պարտէզում, առանձնատան մուտքի դիմաց աճող երկու մագնոլիաների ներքոյ: Դա ոչ-պաշտօնական հանդիպում էր, առանց օրակարգի, բայց մեծապէս յագեցած:

Մեր Հօր խօսքերի ետեւում նշմարւում էր նրա վիշտը, այն քայքայումի ու վատթարացման պատճառով, որին Աստծոյ ժողովրդի հաւատքը ենթարկւում էր յետժողովական այդ տարիներին. քրիստոնէական ուսուցման, քարոզչութեան մէջ, աստուածաբանական հրատարակութիւններում երբեմն թւում էր՝ թէ կորսուել էր Եկեղեցու գերբնական վախճանի գիտակցութիւնը, կարծես յաւիտենական փրկութեան գաղափարը երկրորդական դիրքի մղուած լինէր, ամբողջ վախճանաբանութեան հետ միասին, նախաբեմը եկեղեցական կամ հասարակական բարենորոգումների ծրագրերին թողնելով, որոնց իրական դրդապատճառը գաղափարախօսական էր: Նախերգանքն էր գերբնական զգացողութեան կորուստի, որին ականատես ենք այսօր եւ որի համատարած հետեւանքն է փլուզումն այն բոլոր պատնէշների, որոնք ընդդիմանում են գործնական նիւթապաշտութեանը: Աստծոյ զգացողութիւնը կորցնելով, մարդն ամենագուցակ շահերի գոհն է դառնում:

Այսպիսի իրավիճակի դիմաց, Սբ. Եօզէմարիան այդ հանդիպման ժամանակ պնդում էր միայն մէկ դեղատոմսի վրայ. անձնական սրբութիւն, ներանձնական կեանք, աղօթք: Քրիստոնեան չի կարող – սա էր իր խորհրդածութիւնների իմաստը – որդեգրել լոկ մարդկային նպատակներ ու հեռանկարներ, կարծես թէ երկրայինը գոյութեան միակ տարածաչափութիւնն է եւ կարծես թէ երկրի վրայ կարող ենք կռթնել միմիայն մեր խեղճ ուժերի վրայ: Մեր ամբողջ կեանքը, մինչդեռ, պէտք է անցնի առաջի Աստուծոյ. «Աստուած ամէնուր է, – ասաց խօսակցութեան մի պահին, – յատկապէս մեր սրտում, եթէ Նրան դուրս չենք վռնդում: Քանի դեռ շնորհի մէջ ենք, Տէրը մեզնում է բնակւում: Եւ ուստի մենք բոլորս, ամէնուր, կարող ենք փնտուել Նրան մեր հոգիներում»<sup>1</sup>: Այդ խօսակցութեան

<sup>1</sup> Մէջբերումները քաղուած են AGP, P01 1973 հաւաքածոյից, էջ 832-841: P01 համառօտագրութիւնը մատնանշում է վավերագրերի մի հաւաքածոյ Առաջնորդութեան Գլխաւոր Դիւանից (AGP = Archivio Generale della Prelatura), որոնց շարքին են նաեւ Հիմնադրի բանաւոր քարոզչութիւնից քաղուած գրառումները:

ընթացքում էր, որ Սբ. Եօզէմարիան ակնարկեց «Դէպի սրբութիւն» քարոզին, որը դեռ նոր էր հրատարակուել Իսպանիայում: Ահա նրա խօսքերը. «Այն ինչ գրել եմ ձեզ, նման է Կողմաշարին, որը դպրոցում գործածում էինք ուղիղ գծով գրելու համար: Դրանից բացի, ստանում էինք նաեւ ուսուցչի օգնութիւնը, որն իր ձեռքով բռնում էր մեր ձեռքը եւ մեզ սովորեցնում էր գրել: Արդիւնքը, որ ստացւում էր, իր գրութիւնը չէր, այլ՝ մերը, որն իր վրայ մի քիչ կրում էր ուսուցչի ձեռագրի դրոշմը: Ճիշտ այդպէս, հոգեւոր կեանքում Սուրբ Հոգին է, որ բռնում է մեր ձեռքը եւ առաջնորդում: Մենք բոլորս, Օպուս Դէյուս, ունենք նաեւ այս ընդհանուր տողաշարը, որն աշխարհի մէջ, փողոցներում, հայեցողութեամբ եւ աղօթքով ապրող անձինք լինելու մեր հոգին է: Այս ընդհանուր տողաշարի ներսում իւրաքանչիւր ոք ունի իր անձնական հոգեւոր կեանքը, որն անկախ է միւսներից: Մենք բոլորս ունենք աստուածային միեւնոյն արիւնը, բայց մեզնից իւրաքանչիւրն ունի իր սեփական կեանքը, իր սեփական նկարագիրը, իր սեփական հիանալի անձնականութիւնը: Ընթերցէք, հետեւաբար, այդ էջերը եւ խորհրդածեցէք դրանց շուրջ, իսկ յետոյ՝ յառաջ, ինքներդ գրեցէք այս տողաշարի վրայ, Տիրոջ խնդրելով բռնել ձեր ձեռքը [...]: Ձեզնից իւրաքանչիւրը պէտք է իր իսկ անձնական հոգեւոր կեանքն ունենայ, կերտուած՝ Աստուծոյ օգնութեամբ, որ բռնում է ձեր ձեռքից եւ ձեզ գրել է տալիս տողաշարի վրայ, որ Հայրն ուրուագծել է Աստուծոյ որդիների համար Օպուս Դէյուս»<sup>1</sup>:

## Պարագաներ

«Դէպի սրբութիւն» քարոզն առաջին անգամ լոյս տեսաւ Իսպանիայում, 1973թ. Յուլիսին, որպէս մասերից մէկը մի գրքոյկի, որը բովանդակում էր նաեւ «Աղօթքի կեանքը» քարոզը<sup>2</sup>: Քանի որ այդ օրը, Ուրիոյում, Սբ. Եօզէմարիան ոչ մի կերպ չակնարկեց այս միւս քարոզին, եւ դրանից միշտ եզրակացրել եմ, որ իր աչքին «Դէպի սրբութիւն» քարոզն էր այդ հրատարակութեան իրական առանցքն ու գլխաւոր տարրը: Մի քանի ամիս անց, միշտ միասին, աղօթքի մասին երկու քարոզներն առաջին անգամ լինելով հրատարակուեցին Իտալիայում<sup>3</sup>. Հետագայում ներառուեցին Աւստրոյ ընկերներ քարոզների հաւաքածոյում, որն յետմահու լոյս տեսաւ 1982 թուականին:

«Աղօթքի կեանքը» քարոզը համապատասխանում է մի խորհրդածութեան, որը Սբ. Եօզէմարիան քարոզել է 1955թ. Ապրիլի 4ին, Սուրբ Խաչի Հռոմէական Վարժարանի ուսանողներին, Հռոմում գտնուող կրթական այդ միջազգային կենտրոնում, հոգեւոր առանձնութեան ու խորհրդածութեան մի շաբաթուայ ընթացքում: «Դէպի սրբութիւն» քարոզը ներկայացնում է բովանդակութիւնը մի խորհրդածութեան, որը նա թելադրել է 1967թ. Նոյեմբերի 26ին, Օպուս Դէյի կենտրոնական նստավայրում, կրթական մի հանդիպման ընթացքում<sup>4</sup>:

Իր քարոզչութեան ընթացքում Սուրբ Եօզէմարիան մեծ մասամբ յանկարծաբանում էր, հետեւելով խօսքն առաջնորդող մի քանի մտքերի, որոնք ծայր աստիճան հակիրճ կերպով գրառած էր լինում փոքրիկ թղթիկների վրայ, որոնք գործածում էր որպէս մտքի թելը չկորցնելուն ծառայող հետքեր: Նրա խօսքերը յաճախ ձայնագրւում էին, իսկ յետոյ Հիմնադիրը, դրանց հրատարակումից առաջ, վերանայում էր գրութիւնը, կատարում հարկաւոր սրբագրումները եւ ապա արտօնում դրանց լոյս ընծայումը:

<sup>1</sup> AGP, P01, *ibid.*, pp. 835-836.

<sup>2</sup> *Folletos de Mundo cristiano մատենաշար*, թիւ 168, էջ 42.

<sup>3</sup> Ed. Ares, Milano 1974, pp. 56.

<sup>4</sup> Դրանք այժմ գտնուում են AGP, P09, pp. 29-36; 77-88 հատուածներում, ուր հաւաքուած են այն գրութիւնները, որոնք Հեղինակի իսկ կողմից վերատեսնուել են եւ արտօնուել հրատարակուելու: Այս քարոզների իսպաներէն բնագրերի վերնագրերն են. *La oración de los hijos de Dios (Աստուծոյ որդիների աղօթքը)* եւ *El camino nuestro en la tierra (Երկրի վրայ մեր ճանապարհը)*:

Գրութեան շարադրման գործում հանգրուանների այս յաջորդականութիւնը նշանակում է նաեւ, որ այն պահից, երբ հեղինակն արտասանել է այդ խորհրդածութիւնը, մինչեւ այն պահը, երբ դրանք վերանայել է հրատարակութեան նպատակով, բնագիրն անյայտ է մնացել հրատարակիչներին: «Աղօթքի կեանքը» քարոզի պարագային այդ ժամանակաշրջանը ակելի քան 18 տարի է, մինչ «Դէպի սրբութիւն» քարոզի պարագային՝ 6 տարի: Այս փաստից կարող ենք եզրակացնել, որ ինքն իսկ Սբ. Եօզէմարիան է որոշել, այդքա՛ն տարիներ անց, հրատարակել այդ գրութիւնները:

Այդ որոշման մէջ հնարաւոր է նաեւ տեսնել իր կողմից աստուածային բացայայտ հրամանին տրուած պատասխանը, որն աղօթքի լուծեան մէջ ստացել էր 1970թ. Օգոստոսի 6ին<sup>1</sup>. «Գօր ձայնով աղաղակիր եւ մի՛ լռիր»: Այդ օրը Սբ. Եօզէմարիան հասկացաւ, որ Տէրն իրենից պահանջում էր յստակ կերպով լսելի դարձնել իր ձայնը ընդհանուր ճգնաժամի այդ իրավիճակում:

## Բովանդակութիւնը

Այս քարոզների բովանդակութիւնից, կարծես թափանցիկ քօղի ետեւում, յայտնի երեւում է Հեղինակի անձնականութիւնը: Կան, հետեւաբար, ընթերցումի երկու հարթութիւններ. առաջին հայեցակէտը դա զուտ առարկայականն է, որը վերլուծում է գրութեան բովանդակութիւնը. երկրորդը փնտռում է Հեղինակի ներանձնական հոգեւոր կեանքի հետքերը: Սկսենք մօտեցման առաջին կերպից: Վերադառնալով տողաշարի փոխաբերական պատկերին, այն կայանում է նրանում, որ ջանանք ճշգրիտ տեղորոշել Սբ. Եօզէմարիայի կողմից ուրուագծուած տողերը, հանգոյցային կէտերը, որոնց երկայնքին ծաւալում է աղօթքի շուրջ կատարած նրա խորհրդածութիւնը: Սա կատարելուց յետոյ, ընթերցողը կը ջանայ իւրացնել դրանք եւ դրանց հիմքի վրայ կազմակերպել Տիրոջ հետ իր անձնական երկխօսութեան կառոյցը:

Համառօտ կերպով ընդգծենք հիմնական մի քանի գաղափարներ, որոնք մեզ բնորոշ են թւում Սբ. Եօզէմարիային:

ա) Նախեւառաջ, նա վստահութեամբ հաստատում է, որ աղօթքը – աստուածաբանների կողմից *simpliciter* անուանուող մտային աղօթքը – սրբութեանը հասնելու միակ ճանապարհն է. «Հիմքն է գերբնական բոլոր գործերի [...]: Եթէ կամենում ենք հաւատարմօրէն հետեւել Տիրոջ կողմից թողնուած հետքերին, սա՛ է միակ ճանապարհը [...]: Նրա հետ միասին կը բացայայտենք, թէ ինչպէս է հնարաւոր գերբնական կարեւորութիւն հաղորդել երեւութապէս ամենաանշան գործերին, կը սովորենք յաւիտենականութեան թրթիռով ապրել մեր կեանքի իւրաքանչիւր վայրկեանը [...]: Աղօթքն անցեալում, ինչպէս եւ այսօր, միակ գէնքն է, միակ զօրեղ միջոցը՝ ներանձնական հոգեւոր պայքարի մարտնչումներում յաղթելու համար» (թիւ 1-5):

բ) Աղօթքի խորութիւնը, սաստկութիւնը չեն հայթայթում մարդկային ջանքերով. կախում չունեն անհատի մտամփոփումի կամ արտայայտչական կարողութիւններից, այլ՝ շնորհից. «Եթէ պատրաստուած չես զգում քեզ, գնա՛ Յիսուսի մօտ, ինչպէս Նրա մօտ էին գնում աշակերտները. Մեզ աղօթել սովորեցրու: Եւ դու ինքդ էլ կը տեսնես, որ Սուրբ Հոգին օգնութեան է հասնում մեր փկարութեանը [...]: Եւ հասնում է Սուրբ Հոգու այն ամբողջ սիրալի օժանդակութիւնը – լոյս, կրակ, ուժգին քամի – , որը կրկին բորբոքում է հուրը եւ այն ընդունակ է դարձնում սիրոյ հրդեհներ արծարծելու» (թիւ 7):

գ) Շնորհը երբեք չի պակասում. ուստի, եթէ կանոնաւոր կերպով իսկապէս խորանում ենք աղօթքի ճանապարհներով ներս, Տէրը մեզ չի արգելում մերձենալ աստուածային մտերմութեանը. «Այդպիսով, գրեթէ առանց նկատելու դա, յառաջ կ'ընթանանք աստուածային քայլերով, հօր ու կորովի» (թիւ 9):

<sup>1</sup> Հմմտ. A. Vázquez de Prada, *Il Fondatore dell'Opus Dei*, vol. III, p. 581.

դ) Սբ. Եօզէմարիան, այն բոլոր տեսակէտներում, ուր դրսեւորել է հիմնադրի իր առաքելութիւնը, նախեւառաջ եղել է ազատութեան սիրահար: Սա վերաբերում է նաեւ իր կողմից արուած հոգեւոր ուսուցումներին: Այսպիսով, ի միջի այլոց, հակառակ դարերի ընթացքում բիւրեղացած մի ականգութեան, կամեցաւ կործանել դպրոց լինելու որեւէ յաւակնութիւն այն հարցերում, որոնք վերաբերում են ներանձնական հոգեւոր կեանքին: Լսենք իր խօսքերը. «Ինչպէ՞ս աղօթել: Կարող եմ վստահեցնել ձեզ, առանց սխալուելու վախի, որ գոյութիւն ունեն չա՛տ, մանաւանդ թէ՛ կ'ասէի աղօթելու անսահմանական կերպեր: Բայց եւ ձեր բուրբիս համար կը կածենայի Աստուծոյ որդիների իրական աղօթքը, ո՛չ թէ կեղծաւորների շատախօսութիւնը, որոնց ուղղուած է Յիսուսի գգուչացումը. Ո՛չ ածէն ոք, որ ինչ ասու է "Տէ՛ր, Տէ՛ր", կը մտնի երկնի արքայութիւն (Մտթ 7, 21): Նրանք՝ ու՛քեր առաջնորդուում են կեղծաւորութեամբ, թերեւս կարող են ձեռքբերել աղօթքի աղօթուկը, – ինչպէս գրում է Սուրբ Օգոստինոսը – , բայց ո՛չ նրա ձայնը, որովհետեւ նրանց պակասում է կեանքը (Enarrationes in Psalmos, 139, 10), որովհետեւ պակասում է Հօր կամքը կատարելու պատրաստակամութիւնը: Տիրոջ ուղղուած մեր աղօթքն, ուստի, թող միասին ընթանայ Սուրբ Հոգու կողմից մեր հոգիներում արծարծուած ներանձնական հոգեւոր մղումներն իրականութեան վերածելու արդիւնաւէտ փափաքի հետ» (Թիւ 6):

ե) Ազատութիւն ծրագրաւորումներից եւ շնորհի առաջնահերթութիւն, – ասացինք: Սա նշանակում է, որ աղօթքի բովանդակութիւնը, հանգրուան առ հանգրուան, լինելու է գործ, որն հարկաւոր է յանձնել Սուրբ Հոգու առաջնորդութեանը: Բայց գոյութիւն ունի իրական աղօթքի մի անհրաժեշտ պայման, մի պայման, որը կախում ունի մեզնից եւ որն իսկ տարբերութիւն է մտցնում ինքնահաստատական մենախօսութեան եւ Տիրոջ հետ երկխօսութեան միջեւ: Իրական աղօթքը բխում է, երբ հոգին իրեն իսկապէս դնում է Աստուծոյ ներկայութեանը, երբ – մեր Հեղինակին հոգեհարազատ եզրաբանութիւնը գործածելու համար – փնտրում ենք Աստուծուն. «Բրիստոսի հետ նոյնանալու ջանքում ինձ հաճելի է զանազանել չորս աստիճաններ. փնտռել Նրան, գտնել Նրան, յաճախել Նրան, սիրել Նրան: Դուք թերեւս տեսնում էք, որ գտնում էք տակաւին առաջին հանգրուանում: Փնտրեցէք Նրան ցենսանքով, ձեր բոլոր ուժերով փնտրեցէք Նրան ինքնուրոյն ձեռնով: Եթէ նման եռանդով գործէք, համարձակուում եմ երաշխաւորել ձեզ, որ Նրան արդէն իսկ գտել էք, եւ որ արդէն իսկ սկսել էք յաճախել Նրան եւ սիրել, եւ երկնքում ունենալ ձեր երկխօսութիւնը (Հմմտ. Փլպ 3, 20)» (Թիւ 25):

զ) Մինչ հաստատում է ազատութեան առաջնահերթութիւնը հոգեւոր կեանքում, Սբ. Եօզէմարիան սահմանում է նրա վաւերականութեան իրական դատանիչը, որը կայանում է ասորուածային կամքը կարարելու անկեղծ պարրասպակամութեան մէջ. «Պէտք է ջանք գործադրենք, որպէսզի մեզնում չմնայ երկուութեան եւ ոչ իսկ ստուերը: Տիրոջ կողմից այսքա՛ն խիստ կերպով դատապարտուած այս չարիքը մեզնից հեռու վանելու առաջին պայմանը մեր սեփական վարքում ձեռքի հանդէպ խորշուձի յստակ, սովորական եւ այժմէական տրամադրուածութիւն ունենալն է: Ծանր մեղքի հանդէպ ուժգին եւ անկեղծ ստիպում պէտք է զգանք մեր սրտում եւ մեր հոգում: Պէտք է նաեւ իւրացնենք խորացած ու արմատացած մի տրամադրուածութիւն, խորշելու կամովին կատարուած ներելի մեղքից, խորշելու այն զիջումներից, որոնք մեզ չեն զրկում աստուածային շնորհից, բայց չարաչար հիւծում եւ տկարացնում են ուղիները, որոնցով այն մեզ է հասնում» (Թիւ 6):

է) Վաւերականութեան ներկայացուած դատանիչի հետեւանքներից մէկը<sup>1</sup> նշմարելի է Խաչի դիմաց ներգործական ինքնաշանձնուձի դիրքորոշման մէջ, որը Սբ. Եօզէմարիան տեսնում է

<sup>1</sup> Որ նրանում նկատելի է ուղղակիօրէն Տիրոջ կողմից ընդունուած մի պատգամ, հաստատում է Սբ. Եօզէմարիայի Ծանապարհ երկի կէտերից մէկը, ուր հեղինակը գրառել է ինքնակենսագրական մի գրուածք, աստուածային մի պատգամ, որը ստացել է 1932թ. Փետրուարի 16ին. «Պատմում են մի հոգու մասին, որն աղօթքի ժամանակ Տիրոջն ասելիս. "Յիսուս, սիրում եմ Բեզ", երկնքից ահա այս պատասխանը լսեց. "Գործերն են սէր, ո՛չ թէ գեղեցիկ մտածումներ": Խորհիր, արդեօք դու

որպէս աղօթքի ժամանակ հասնելիք գլխաւոր նպատակակէտերից մէկը. «Տիրոջ կողքին բերկրալի են նաեւ վիշտը, անձնուրացութիւնն ու տառապանքները: Որքա՛ն ուժ են ստանում Աստծոյ որդիները, իմանալով՝ որ այդքա՛ն մօտ են Հօրը: Ուստի, ինչ էլ որ պատահի, ամուր եւ վստահ եմ Քո հետ, Տէր եւ Հայր իմ, որ վէճ ես եւ զօրութիւն» (Թիւ 9):

Ն) Համատեղ ներկայութիւնը խոյանքների, որոնց ընդունակ է սիրահար սիրտը, եւ սէրը գործերով արտայայտելու կոչի, Սբ. Եօզէմարիայի գրութիւնների մեկնողական տեւական բանալիներից մէկն է: Նրանցում լիովին բացակայում է զգացականութեան որեւէ հետք: Այնքան, որ – եւ այսպիսով ցատկելով անցնում ենք միջանկեալ բազմաթիւ հանգրուաններ – երկրից դէպի երկինք եւ երկնքից դէպի երկիր երկարող այս շարունակական շարժման գագաթնակէտին հանդիպում ենք մի տեսութեան, որը լուռիմաց ենթադրում է մի թերեւս անսպասելի սկզբունք, որը սակայն բաւականին յարակից է պատգամի հետ, որն իր կենտրոնում է դնում սրբութեան համընդհանուր կոչումը. Խորհրդապատկան (միստիկայի) գազաթնէն անբաժանելի են ճգնորդութեան (ասկետիկայի) գանձերից: Ահա իր խօսքերը. «Ճգնողութի՞ւն: Խորհրդագագացութի՞ւն: Ես այս հարցով չեմ մտահոգւում: Ինչ էլ որ լինի, ճգնողութիւն կամ խորհրդագագացութիւն, ի՞նչ կարեւորութիւն ունի: Աստծոյ շնորհն է: Եթէ դու ջանում ես խորհրդածել, Տէրը քեզ չի մերժի իր օգնութիւնը: Հաւատք եւ հաւատքի գործեր: Գործեր, որովհետեւ Տէրը – սկզբից եւեթ համոզուեցիր սրան եւ ես էլ արդէն ընդգծեցի սա – միշտ աւելի պահանջող է: Սա արդէն իսկ հայեցողութիւն է, սա արդէն իսկ միութիւն է» (Թիւ 33):

### Խորհրդագագացական փորձառութիւնը

Այս կէտին, այսինքն՝ խորհրդագագացական կեանքին հասնելով, անցնում ենք նախապէս ակնարկուած երկրորդ տեսանկիւնին, այսինքն՝ ենթակայականին: Այս քարոզներում, յատկապէս՝ «Դէպի սրբութիւն» քարոզում, բազմաթիւ հատուածներ պարունակում են խորհրդագագացական փորձառութիւնների ակնարկներ, որոնք Հեղինակն անշուշտ չի քաղել հոգեւոր կեանքի դասագրքերից<sup>1</sup>: Մի քանի օրինակներ ենք ներկայացնում, առանց դասակարգումների մէջ խորանալու.

«Նախ մի սլաքական աղօթք, ապա երկրորդը, իսկ յետոյ՝ երրորդը ... մինչեւ որ այս եռանդը կը թուայ քեզ անբաւարար, որովհետեւ խօսքերն աղքատիկ են ... եւ յայնժամ նրանց տեղը կը գրաւի աստուածային մտերմութիւնը, Աստուծոյ ուղիւստ սեւեռուն հայեացքը, առանց դադարների եւ առանց երբեւէ յոգնելու: Այդպիսի պահերին մեզ թւում է՝ թէ ապրում ենք ազատագուրկ, բանտարկեալների նման: Մինչ հնարաւորինս մեծագոյն կատարելութեամբ, մեր սխալներով եւ մեր սահմանափակումներով հանդերձ, կատարում ենք մեր վիճակին եւ մեր աշխատանքին բնորոշ գործերը, հօգին կը կամենար փախչել: Ուղղւում ենք առ Աստուած, ինչպէս երկաթը՝ մագնիսի ուժից ձգուած: Սկսում ենք սիրել Յիսուսին մի առաւել արդիւնաւէտ եղանակով, քաղցր թրթիռով» (Թիւ 21):

Ինքը էլ արժանի չե՞ս այս գործովալի յանդիմանութեանը» (Թիւ 933): Հիմնադիրն այսպիսով սահմանում է մի սկզբունք, որը պէտք է միշտ առաջնորդի իր հոգեւոր զաւակներին. սէրը ցուցանելի է գործերով, որոնք վկայում են նրան: Սէրը չի կարող շփոթուել պարզ զգացումների հետ:

Իսկ ազբերների ամբողջական վերակազմութեան համար, որոնք փաստում են աստուածային այդ պատգամի ընդունումը, համառ. Camino. Edición crítico-histórica preparada por Pedro Rodríguez, Instituto Histórico Josemaría Escrivá, Ed. Rialp, Madrid 2002, pp. 964-966.

<sup>1</sup> Խորհրդագագացութիւն ասելով հասկանում ենք Աստծոյ ներկայութեան փորձառական որեւէ ճանաչողութիւն: Ճանաչողութիւն, փորձառութեան միջոցով, եւ սիրոյ գեղում. սա է խորհրդագագացութեան էութիւնը, անկախ նրան ընկերացող եզակի երեւոյթների (Ֆենոմէնների) բազմազանութիւնից, որոնց միջոցով այդ փորձառութիւնը հաղորդւում է քրիստոնեային, եւ որոնք դասակարգուած են ուսումնասիրողների կողմից:

«Տիրոջ սրբազնասուրբ մարդկութիւնն իսկապէս սիրելով եւ նրանով զմայլուելով, մէկ առ մէկ կը բացայայտենք Նրա Վէրքերը: Եւ կրաւորական մաքրագործումի այդ ժամանակահատուածներում, որոնք լի են վշտով, բայց եւ ուժգին ժամանակներ են, քաղցր ու դառն արցունքների, որոնք ջանում ենք թաքցնել, կարիքը կը զգանք ապաստանելու Նրա սրբազնասուրբ Վէրքերից իւրաքանչիւրի ներսում. մաքրագործուելու համար, վայելքով ճաշակելու համար Նրա փրկարար Արիւնը, ամրապնդուելու համար: Այդ ապաստաններին կը հասնենք աղաւնիների նման, որոնք, ինչպէս ասում է Աստուածաշունչը (Հմմտ. Երգ 2, 14), ժայռի ճեղքերի ներսում են ապաստանում, երբ վրայ է հասնում փոթորիկը: Թաքնուում ենք այդ ապաստանի ներսում, այնտեղ գտնելու համար Քրիստոսի հետ մտերմութիւնը. եւ նկատում ենք, որ Նրա խօսքերը քաղցր են, իսկ տեսքը՝ զեղաշնորհ ու վայելուչ (Հմմտ. Երգ 2, 14)» (Թիւ 27):

«Մինչեւ իսկ երեւակայում ենք, թէ Տէրը չի լսում մեզ, թէ խաբում ենք ինքներս մեզ, թէ լսում է Ծրայն Տէր ձայնի ծենախօսութիւնը: Մեզ տեսնում ենք մի այնպիսի վիճակում, որ կարծես յենակէտ չունենք երկրի վրայ եւ լքուած ենք երկնքից: Մեղքի, նաեւ ներելի մեղքի նկատմամբ մեր խորշումը, սակայն, իրական է ու ճշմարիտ, նաեւ՝ գործնական: Քանանացի կնոջ յամառութեամբ, գլուխներս խոնարհաբար կքում ենք մինչեւ գետին, նրա նման, որ երկրպագեց աղերսելով. ”Տէ՛ր, օգնի՛ր ինձ” (Մտթ 15, 25): Յայնժամ կը փարատուի խաւարը, յաղթուած՝ Սիրոյ լոյսով» (Թիւ 29):

Այն, որ կ'ուզենայի այստեղ ընդգծել, այն է՝ որ Օպուս Դէյի Հիմնադիրը չի ուշացնում իր յստակ զգուշացումը. «Չեմ ակնարկում բացառիկ ու արտասովոր իրավիճակների: Են, շատ լաւ կարող են լինել Տէր հոգու սովորական երեւոյթներ. որպէս սիրոյ մի խենթութիւն, որն, առանց ցուցադրութեան, առանց արտառոցութեան, սովորեցնում է մեզ տառապել եւ ապրել, որովհետեւ Աստուած մեզ պարգեւում է Իմաստութիւնը» (Թիւ 32): Եւ տակաւին. «Այսպիսին պէտք է լինի բազում քրիստոնեաների կեանքը, որոնք ընթանում են իրենց սեփական հոգեւոր ճանապարհով – ճանապարհներն անթիւ են ու անհամար – ընդամէջ աշխարհային զբաղմունքների, թերեւս եւ ոչ իսկ գիտակից լինելով դրան» (Թիւ 33):

Այլ խօսքերով, որպէս մեկնակէտ ունենալով սրբութեան համընդհանուր կոչման հաստատումը, Օպուս Դէյի Հիմնադրի պատգամն իր եզրահանգումներում անհրաժեշտօրէն ընդգրկում է հաստատումը, որ քրիստոնեայի սովորական կեանքն աշխարհում կարող է իսկապէս հայեցողական կեանք դառնալ եւ, հետեւաբար, փորձառութիւնն ունենալ խորհրդագրագոյնութեան գլխապտոյտների: Մանաւանդ թէ, այն իր էութեամբ իսկ խորհրդագրագոյնական է, այսինքն՝ պարգեւուած է, ճրիօրէն տրուած, արդիւնքը հոգու մէջ Սուրբ Հոգու պարգեւների ներգործութեան: Այս իրողութիւնը նրա համար անվիճելի է, անկախ այն բանից՝ թէ մենք դրան այսպէս եւ այժմ գիտակից ենք կամ ոչ. իրօք, «Տէրը, որ մեր Հայրն է [...], հարստութեան է վերափոխում մեր չքաւորութիւնը, ուժի՛ մեր տկարութիւնը: Ինչե՞ր է արդեօք պատրաստում մեր համար, եթէ չենք լքում Իրեն, եթէ անդադար յաճախում ենք Իրեն, եթէ Իրեն ուղղում ենք գործերով փաստուած գործվի խօսքեր, եթէ Իրենից խնդրում ենք ամէն բան, վստահ իր ամենակարողութեանն ու իր ողորմութեանը: Միմիայն որովհետեւ իր որդին վերադարձաւ – Իրեն դաւաճանած որդին – Նա տօնախմբութիւն կազմակերպեց: Ինչե՞ր արդեօք կը պարգեւի մեզ, եթէ ջանանք միշտ իր կողքին մնալ» (Թիւ 34):

Թերեւս, այս համառօտ ակնարկները կարող են օգնել մեզ յաղթահարելու բաւական յաճախակի հանդիպող մի սխալ հասկացողութիւն. համարելը, թէ խորհրդագրագոյնական իրականութիւնն անբաժանելի է ենթակայական այն անճառելի փորձառութիւններից, որոնց մասին կարգում ենք յատկապէս իսպանական մշակոյթի ոսկեդարի (siglo de oro) դասական հեղինակների մօտ, ի մասնաւորի՝ Սրբուհի Թերեզա Աւելյացու եւ Սուրբ Յովհաննէս Խաչի գրութիւններում, որոնք մեծապէս հակուած են խորհրդագրագոյնական կեանքը նկարագրելու հոգուց ներս Աստծոյ բուռն թափով մուտքի դիմաց սեփական ենթակայական հակազդեցութիւնների համաձայն: Բայց խորհրդագրագոյնական կեանքի

էութիւնը միայն սա չէ, եւ այն ճանաչելու ամենավաւերական մօտեցումը դա առարկայականն է. աստուածային ներգործութեան ճրիութիւնն է, պարգեւ եւ շնորհ լինելը, որը զարգանում է մեր սկզբնական տրամադրուածութեան հիմքի վրայ, որի մասին արդէն խօսեցինք:

Ամենանենգ ու դաւադիր սպառնալիքներից մէկը, որ ամէնօրեայ կեանքը հիւսում է մեր շուրջըտը, գաղափարականների հիւծումն է, հասարակացումը, կորուստը – ինչը որ հետեւանքն է նաեւ վերը նշուած սխալ հասկացողութեան – գերբնական տեսադաշտի, որն իսկապէս պատշաճ կարող էր լինել Աստուծոյ սիրոյ լիութեանը մեր կոչումին: Սա որպէս մեկնակէտ ունենալով է, որ Տիրոջ հետ միութիւնն ամէնօրեայ կեանքում փնտռելու Սբ. Եօզէմարիայի յորդորում մենք բոլորս կարող ենք իսկապէս գտնել ներշնչանքը, որի կարիքն ունենք. «Մինչդեռ երբ հաւատքը թրթռում է հոգու խորքում, նկատում ենք, որ քրիստոնեայի քայլերը չեն հեռանում որեւիցէ մարդու բնական ու ամէնօրեայ կեանքից: Եւ որ մեծ սրբութիւնը, որն Աստուած ակնկալում է մեզնից, ամփոփուած է ամէն օրուայ փոքրիկ իրողութիւններում, այստե՛ղ եւ ա՛յժմ» (թիւ 37):

¶ »ñŪ ùÉ³ǎáŪø³÷áǎǎǎ

Սբ. Եօզէմարիա Էսքրիվայի սրբադասման  
դատավարութեան խնդրարկու

# ԱՊՈԹՔԻ ԿԵԱՆՔՆԵՐ<sup>1</sup>

1. Ամէն անգամ, որ մեր սրտերում զգում ենք լաւագոյնը լինելու, Տիրոջն առաւելագոյն վեհանձնութեամբ համապատասխանելու փափաքը, եւ փնտռում ենք մի լոյս, որն առաջնորդի մեզ, մի յստակ ու ճշգրիտ յենակէտ մեր քրիստոնէական գոյութեան համար, Սուրբ Հոգին մեր յիշողութեան մէջ վերարթնացնում է Աւետարանի խօսքերը. «Յարկաւոր է միշտ աղօթել, առանց յոգնելու»<sup>2</sup>: Աղօթքը հիմքն է գերբնական բոլոր գործերի: Աղօթքը մեզ դարձնում է ամենակարող, եւ եթէ անտեսենք նրա զօրութիւնը, ոչ մի արդիւնք չենք ստանայ եւ ոչնչի էլ չենք հասնի:

Կը կամենայի, որ այսօր, մեր այս խորհրդածութեան ընթացքում, մէկընդմիշտ համոզուէինք անհրաժեշտութեանը՝ սկսելու լինել հայեցողական հոգիներ, փողոցներում եւ աշխատանքի մէջ, շնորհիւ մեր Աստծոյ հետ տեւական խօսակցութեան, որն օրուայ ընթացքում երբեք չպէտք է դադարի: Եթէ կամենում ենք հաւատարմօրէն հետեւել Վարդապետի կողմից թողնուած հետքերին, սա՛ է միակ ճանապարհը:

2. Մեր հայեացքն ուղղենք Յիսուս Քրիստոսին, մեր բնօրինակին, հայելուն, որի մէջ պէտք է տեսնենք մեր իրական կերպարանքը: Ինչպէ՞ս է Նա վարւում, նաեւ արտաքուստ, կարեւոր իրավիճակներում: Նրա մասին ի՞նչ է մեզ պատմում Սուրբ Աւետարանը: Յուզուում եմ, տեսնելով Յիսուսի տեւական տրամադրուածութիւնն ու դիրքորոշումը, որով մեծ հրաշքներից առաջ դիմում է Հօրը, եւ օրինակի դիմաց, որը մեզ տալիս է Իր հասարակաց կեանքը սկսելուց առաջ, երբ քառասուն օր ու քառասուն գիշեր անապատում առանձնանում է աղօթելու համար<sup>3</sup>:

Մեծապէս կարեւոր է – ներողամիտ եղէք, որ պնդում եմ – ուշադրութեամբ զննել Փրկչի վարքը, քանի որ Նա եկել է ցոյց տալու համար մեզ դէպի Հայրն առաջնորդող ճանապարհը: Նրա հետ միասին կը բացայայտենք, թէ ինչպէս է հնարաւոր գերբնական կարեւորութիւն հաղորդել երեւութապէս ամենաաննշան գործերին. կը սովորենք յաւիտենականութեան թրթիռով ապրել մեր կեանքի իւրաքանչիւր վայրկեանը եւ միշտ աւելի աճող խորութեամբ կը հասկանանք, որ արարածը կարիքն ունի Աստծոյ հետ մտերմիկ խօսակցութեան պահերի, Նրան մօտ մնալու համար, Նրան աղերսելու, Նրան փառաբանելու համար, Նրան առատօրէն յայտնելու համար երախտագիտութեան սեփական զգացումները, Նրան ունկնդրելու կամ, պարզապէս, Նրա հետ ժամանակ անցկացնելու համար:

Երկար տարիներ արդէն, խորհրդածելով Տիրոջ վարուելակերպի շուրջ, այն եզրակացութեանն եմ հանգել, որ առաքելութիւնը – առաքելութեան ո՛ր կերպն էլ որ վերցնենք – ներանձնական հոգեւոր կեանքի առատաբուխ յորդումի արդիւնքն է: Ինձ, այս առումով, այնքա՛ն բնական եւ այնքա՛ն գերբնական է թւում Աւետարանի այն հատուածը, որը պատմում է, թէ ինչպէս Յիսուս որոշեց վերջնականօրէն ընտրել առաջին Տասներկուսին: Ղուկաս Աւետարանիչը պատմում է, որ դրանից առաջ ամբողջ գիշերն աղօթքով անցկացրեց<sup>4</sup>: Ուշադրութեամբ հետեւէք Նրան նաեւ Բեթանիայում, երբ մերձենում է Ղազարոսին յարութիւն տալու, Իր ընկերոջ համար արտասուելուց յետոյ. աչքերը դէպի երկինք է բարձրացնում ու բացականչում. «Երախտագիտութիւն եմ յայտնում քեզ, Յայր, որովհետեւ

<sup>1</sup> Սուրբ Եօզեմարիա Էսքրիվան այս քարոզն արտասանել է 1955թ. Ապրիլի 4ին:

<sup>2</sup> Ղկս 18, 1

<sup>3</sup> Հմմտ. Մտթ 4, 2

<sup>4</sup> Ղկս 6, 12

լսեցիր ինձ»<sup>1</sup>: Նրա յստակ ուսուցումը սա էր. եթէ կամենում ենք օգնել ուրիշներին, եթէ փափաքում ենք իսկապէս մղել նրանց բացայայտելու երկրի վրայ իրենց գոյութեան ճշմարիտ իմաստը, անհրաժեշտ է որպէս հիմք դնել աղօթքը:

3. Այնքան բազմաթիւ են դրուագները, որոնցում Յիսուս խօսում է Հօր հետ, որ այժմ անհնարին է յիշել դրանք բոլորը: Կարծում եմ, սակայն, չենք կարող ի նկատի չառնել սաստիկ զգացումով այդքա՛ն լի եւ իմաստով այդքա՛ն խիտ պահերը, որ նախորդում են Նրա Չարչարանքներին եւ Նրա Մահուանը, երբ Տէրը պատրաստում է մատուցելու Ձոհը, որի շնորհիւ մեզ էր վերադարձուելու աստուածային Սէրը: Վերնատան մտերմիկ միջավայրում, Նրա Սիրտը յորդում է. Հօրն է ուղղում իր աղօթքը, աւետում է Սուրբ Հոգու գալուստը, իրեններին քաջալերում է ունենալու մշտապէս եռանդուն հաւատք եւ սէր:

Աղօթքի մէջ Փրկչի այս եռանդուն ամփոփումն ապա շարունակում է Գեթեմանիում, երբ զգում է, որ այլեւս մօտ է իր Չարչարանքներին, երբ զգում է, որ խոնարհեցումներն ու տառապանքները մօտենում են, որ հասել է ինչի ժամը, չարագործների համար նախատեսուած այդ խստամբեր կառափնատեղին, որն ինքը բուն կերպով փափաքել էր: «Յայր, եթէ կամենում ես, հեռացրու ինձնից այս բաժակը»<sup>2</sup>: Եւ իսկոյն. «Սակայն ո՛չ թե՛ իմ կամքը թող կարարուի, այլ՝ Բնը»<sup>3</sup>: Աւելի ուշ, ինչին գամուած, միայնակ, բազուկները որպէս յաւիտենական քահանայ տարածած, շարունակում է Հօր հետ իր երկխօսութիւնը. «Բն ձեռքերի մէջ եմ աւանդում իմ հոգին»<sup>4</sup>:

4. Այժմ մեր հայեացքներն ուղղենք Նրա Ամենաարբուհի Մօրը, որը նաեւ մեր Մայրն է: Գողգոթայի բարձրունքին, կառափնարանի կողքին, աղօթքի մէջ է: Սա նոր դիրքորոշում չէ Մարիամի համար: Միշտ էլ այդպիսին է եղել նրա վարուելակերպը, իր պարտականութիւնների կատարման մէջ, ընտանեկան օջախի զբաղմունքներում: Մինչ կատարում էր երկրային գործերը, իր ուշադրութիւնը կենտրոնացած էր մնում Աստծոյ վրայ: Քրիստոս, կարարեալ Աւարուած եւ կարարեալ ծարր<sup>5</sup>, կամեցաւ, որ իր Մայրը նոյնպէս – վեհ ու գերընտիր արարածը, շնորհներով լին – հաստատէր մեր սլացքը՝ միշտ վերամբարձելու մեր հայեացքները դէպի աստուածային Սէրը: Խորհրդածեցէք Աւետման տեսարանի շուրջ. Հրեշտակապետը, որն իջնում է հաղորդելու աստուածային պատգամը – աւետիսը, որ նա դառնալու էր Աստծոյ Մայրը – , նրան գտնում է աղօթքի մէջ ամփոփուած: Մարիամն ամբողջովին կենտրոնացած է Տիրոջ ներկայութեանը, երբ Գաբրիէլը ողջունում է իրեն. «Ողորմի՛ր, շնորհներով լի, Տէրը քեզ հետ է»<sup>6</sup>: Մի քանի օր յետոյ, նրա շուրթերից բխում է Մեծացուցչի բերկրանքը, մարեմական այս օրհներգի, որը Սուրբ Հոգին մեզ է աւանդել Ղուկաս Աւետարանիչի ուշադիր հաւատարմութեան շնորհիւ եւ որն արդիւնքն է Աստծոյ հետ Ամենաարբուհի Կոյսի տեւական հաղորդակցութեան:

Մարիամը, մեր Մայրը, երկար ժամանակ խորհրդածել է Հին Կտակարանի սուրբ անձնաւորութիւնների խօսքերը – այրեր եւ կանայք, որոնք սպասում էին Տիրոջը – եւ դէպքերն ու իրադարձութիւնները, որոնց դերակատարներն էին նրանք հանդիսացել: Հիացել էր սքանչելիքների այն առատութեամբ, ողորմութեան այն յորդահոս հեղմամբ, որն Աստուած պարգեւել էր իր ժողովրդին, որը բազում անգամներ սակայն դրսեւորել էր իր ապերախտութիւնը: Անդադար վերանորոգուող երկնային այդքա՛ն զեղուն գորովն ի նկատի ունենալով, յորդում եւ ընդարձակ տարածում է նրա անարատ Սրտի հրայրքը.

<sup>1</sup> Յվհ 11, 41

<sup>2</sup> Ղկս 22, 42

<sup>3</sup> Ղկս 22, 42

<sup>4</sup> Ղկս 23, 46

<sup>5</sup> «Quicumque» կոչուող Հանգանակ:

<sup>6</sup> Ղկս 1, 28

«Անձն ծեփարում է Յիրոզը եւ հոգիս ցնծում է Աստուծով, իմ փրկչով: Նա իր հայտնացն ուղղեց իր աղափանու խոնարհութեանը»<sup>1</sup>: Առաջին քրիստոնեաները, զաւակներն այս ընտրագոյն Մօր, նրանից սովորեցին: Մենք նոյնպէս կարող ենք եւ պարտաւոր ենք սովորել:

5. Գործք Առաքելոցում աւանդուած է մի վկայութիւն, որն ինձ հմայում է, որովհետեւ ներկայացնում է յստակ, միշտ այժմէական մի օրինակ. «Եւ բոլորը յարապետեալ էին Առաքեալների վարդապետութեան, հասի բեկմանը ծասնակցութեան եւ աղօթքի մէջ»<sup>2</sup>: Սա մի յարատեւ վկայութիւն է Քրիստոսի առաջին հետեւորդների կեանքի պատմութեան մէջ. «Բոլորը միեւնոյն հոգիով միաբանուած, յարապետեալ էին աղօթքի մէջ»<sup>3</sup>: Եւ երբ Պետրոսը բանտարկուած է ճշմարտութիւնը համարձակութեամբ քարոզելու համար, որոշում են աղօթել. «Եկեղեցու աղօթքը անդադար առ Աստուած էր բարձրանում նրա համար»<sup>4</sup>:

Աղօթքն այնժամ, ինչպէս եւ այսօր, միակ զէնքն է, միակ զօրեղ միջոցը՝ ներանձնական հոգեւոր պայքարի մարտնչումներում յաղթելու համար. «Ձեր մէջ կա՞յ մէկը, որ քառասպում է: Թող աղօթի»<sup>5</sup>: Պօղոս Առաքեալն ամփոփում է. «Անդադար աղօթեցէք»<sup>6</sup>, աղերսելուց երբեք մի՛ յոգնեցէք:

## Ինչպէս աղօթել

6. Ինչպէ՞ս աղօթել: Կարող եմ վստահեցնել ձեզ, առանց սխալուելու վախի, որ գոյութիւն ունեն շա՛տ, մանաւանդ թէ՛ կ'ասէի աղօթելու անսահմանափակ կերպեր: Բայց ես մեր բոլորիս համար կը կամենայի Աստուծոյ որդիների իրական աղօթքը, ո՛չ թէ կեղծաւորների շատախօսութիւնը, որոնց ուղղուած է Յիսուսի զգուշացումը. «Ո՛չ աճէ՛ն ոք, որ ինձ ասուած է "Տէ՛ր, Տէ՛ր", կը մտնի երկնքի արթայութիւն»<sup>7</sup>: Նրանք՝ ովքեր առաջնորդուած են կեղծաւորութեամբ, թերեւս կարող են ձեռքբերել աղօթքի աղմուկը – գրում է Սբ. Օգոստինոսը – բայց ո՛չ նրա ձայնը, որովհետեւ նրանց պակասում է կեանքը<sup>8</sup>, որովհետեւ պակասում է Հօր կամքը կատարելու պատրաստակամութիւնը: Տիրոջն ուղղուած մեր աղօթքը, ուստի, թող միասին ընթանայ Սուրբ Հոգու կողմից մեր հոգիներում արծարծուած ներանձնական հոգեւոր մղումներն իրականութեան վերածելու արդիւնաւէտ փափաքի հետ:

Պէտք է ջանք գործադրենք, որպէսզի մեզնում չմնայ երկուութեան եւ ոչ իսկ ստուերը: Տիրոջ կողմից այսքա՛ն խիստ կերպով դատապարտուած այս չարիքը մեզնից հեռու վանելու առաջին պայմանը մեր սեփական վարքում մեղքի հանդէպ խորշումի յստակ, սովորական եւ այժմէական տրամադրուածութիւն ունենալն է: Ծանր մեղքի հանդէպ ուժգին եւ անկեղծ սոսկում պէտք է զգանք մեր սրտում եւ մեր հոգում: Պէտք է նաեւ իւրացնենք խորացած ու արմատացած մի տրամադրուածութիւն, խորշելու կամովին կատարուած ներելի մեղքից, խորշելու այն զիջումներից, որոնք մեզ չեն զրկում աստուածային շնորհից, բայց չարաչար հիւժում եւ տկարացնում են ուղիները, որոնցով այն մեզ է հասնում:

<sup>1</sup> Ղկս 1, 46-48

<sup>2</sup> Գրծ 2, 42

<sup>3</sup> Գրծ 1, 14

<sup>4</sup> Գրծ 12, 5

<sup>5</sup> Յկբ 5, 13

<sup>6</sup> 1Թս 5, 17

<sup>7</sup> Մտթ 7, 21

<sup>8</sup> Սբ. Օգոստինոս, *Enarrationes in Psalmos*, 139, 10 (PL 37, 1809).

7. Երբեք չեմ յոգնել աղօթքի մասին խօսելուց եւ, եթէ Աստուած ինձ այդ շնորհը տայ, երբեք էլ չեմ յոգնելու: 1930 թուականին մօտ տարիներին, երբ իմ՝ երիտասարդ քահանայիս մօտ էին գալիս բոլոր դասակարգերին պատկանող անձինք – համալսարանականներ, բանուորներ, առողջներ ու հիւանդներ, հարուստներ ու աղքատներ, քահանաներ ու աշխարհականներ – , որոնք կամենում էին աւելի մօտիկից հետեւել Տիրոջը, միշտ խորհուրդ էի տալիս. «Աղօթեցէք»: Իսկ եթէ որեւէ մէկը պատասխանում էր. «Չգիտեմ եւ ոչ իսկ ինչպէս սկսեմ», նրան յանձնարարում էի տրամադրուել Տիրոջ ներկայութեանը եւ Նրան յայտնել սեփական խռովքն ու մտահոգութիւնը, սեփական անձկութիւնն ու անհանգստութիւնը, այն միեւնոյն խօսքերով. «Տէր իմ, չգիտեմ եւ ոչ իսկ ինչպէս սկսեմ»: Եւ շա՛տ անգամներ, խոնարհ սրտակցութեան այդ պահերին սկիզբ էր առնում Քրիստոսի հետ մտերմութիւնը, յարատեւ յարաբերութիւնը Նրա հետ:

Տարիներ են անցել, բայց ես ուրիշ դեղատոմս չեմ գտել: Եթէ քեզ պատրաստուած չես գգում, գնա՛ Յիսուսի մօտ, ինչպէս Նրա մօտ էին գնում աշակերտները. «Մեկ աղօթել սովորեցրու»<sup>1</sup>: Եւ դու ինքդ էլ կը տեսնես, որ Սուրբ Հոգին օգնութեան է հասնում ձեր փկարութեանը, որովհետեւ ձեռք չգիրտնի ո՛չ՝ թե ինչ պէտք է խնդրենք աղօթելիս, ո՛չ էլ՝ թե ինչպէս է պարզա՞ծ խնդրել. բայց Զոգին անձամբ միջնորդում է ձեր համար՝ անստելի հառաչանքներով<sup>2</sup>, աննկարագրելի, քանի որ գոյութիւն չունեն յարմար միջոցներ՝ նկարագրելու համար նրանց խորութիւնը:

Որքան վստահութիւն է մեզ ներշնչում աստուածային Խօսքը: Ես ոչինչ չէի յօրինում, երբ քահանայական պաշտօնակատարմանս ժամանակ կրկնում էի այդ խորհուրդը, ինչպէս եւ այժմ դեռ կրկնում եմ առանց յոգնելու: Աստուածաշնչի մէջ է պարունակուած եւ այնտեղից է, որ ես ինքս էլ սովորել եմ այն. «Տէ՛ր, չգիտեմ ինչպէս դիմեմ Քեզ: Տէ՛ր, սովորեցրու ինձ աղօթել»: Եւ հասնում է Սուրբ Հոգու այն ամբողջ սիրալի օժանդակութիւնը – լոյս, կրակ, ուժգին քամի – , որը կրկին բորբոքում է հուրը եւ այն ընդունակ է դարձնում սիրոյ հրդեհներ արծարծելու:

## Աղօթք, երկխօսութիւն

8. Արդէն մուտք ենք գործել աղօթքի ճանապարհներից ներս: Ինչպէ՞ս շարունակենք: Նկատած կը լինէք, որ ոմանք – այրեր եւ կանայք – երբ խօսում են, թւում է՝ թէ խօսում են իրենք իրենց հետ, իրենք իրենց բարեհաճութեամբ լսելով: Դա մի գրեթէ անվերջանալի շատախօսութիւն է, մի մենախօսութիւն, որն առանց դադարի պնդում է խնդիրների վրայ, որոնք իրեն են մտահոգում: Նրանք, սակայն, այդ խնդիրները լուծելու միջոցները չեն փնտռում, քանի որ մղուած են թերեւս միմիայն կարեկցանք կամ հիացում ստանալու հիւանդագին ցանկութիւնից: Թւում է՝ թէ նրանց ուրիշ ոչինչ չի հետաքրքրում:

Երբ իսկապէս կամենում ենք բացել մեր սիրտը, եթէ անկեղծ ենք ու պարզ, փնտռում ենք մեզ սիրող, մեզ հասկացող անձերի խորհուրդը. դիմում ենք մեր հօրը, մեր մօրը, ամուսնուն, կնոջը, եղբօրը, ընկերոջը: Սա արդէն երկխօսութիւն է, թէեւ յաճախ փափաքում ենք, լսելուց աւելի, բացուել, կիսուել, պատմել այն՝ ինչ պատահում է մեզ հետ: Տիրոջ հետ էլ պէտք է սկսենք այսպէս վարուել, վստահութեամբ՝ որ Նա լսում է մեզ ու պատասխանում: Ուշադրութիւն կ'ընծայենք Նրան եւ մեր խիղճն ու գիտակցութիւնը կը բացենք խոնարհ զրոյցով, որի ընթացքում, վստահութեամբ լի սրտով, Նրան կը պատմենք այն ամէնը՝ որ բաբախում է մեր մտքում եւ մեր սրտում. ուրախութիւններ ու տրամուլթիւններ, յոյսեր, ցաւեր, յաղթանակներ ու պարտութիւններ, ինչպէս նաեւ մեր առօրեայ կեանքի ամենամանրէն մանրամասնութիւնները: Որովհետեւ գիտակից կը լինենք, որ այն ամէնը՝ որ վերաբերում է մեզ, հետաքրքրում է մեր երկնաւոր Հօրը:

<sup>1</sup> Ղկա 11, 1

<sup>2</sup> Հւմ 8, 26

9. Յաղթեցէք, եթէ հարկաւոր է, բազկաթոռային մտածելակերպին, սխալ համոզուածութեանը՝ թէ աղօթքը կարող է սպասել: Շնորհների այս աղբիւրը երբեք չյետաձգենք վաղուան: Այժմ է պատեհ ժամանակը: Աստուած, որ սիրալիր հայեացքով դիտում է մեր առօրեայ անցուղարձը, ներկայ է մեր ներանձնական աղօթքին. եւ դու, եւ ես – կրկին վստահեցնում եմ ձեզ – պէտք է Նրա վրայ հաստատենք մեր վստահութիւնը, ինչպէս այն կարող ենք հաստատել մեր եղբոր, ընկերոջ, հօր վրայ: Ասա՛ Նրան – ինչպէս ես եմ Նրան ասում – , որ Նա է գերագոյն Մեծութիւնը, գերագոյն Բարութիւնը, գերագոյն Ողորմութիւնը: Եւ աւելացրու. այս իսկ պատճառով է, որ կամենում եմ սիրահարուել Քեզ, չնայած իմ վարուելակերպի կոշտութեանը եւ կոշտութեանն իմ խեղճ ձեռքերի, որոնք տառապած ու չարչրկուած են երկրի սայթաքուն ուղիների փոշուց:

Այդպիսով, զրեթէ առանց նկատելու դա, յառաջ կ'ընթանանք աստուածային քայլերով, հզօր ու կորովի, որոնք մեզ ճաշակել են տալիս խորին համոզմունքը, որ Տիրոջ կողքին բերկրալի են նաեւ վիշտը, անձնուրացութիւնն ու տառապանքները: Որքա՛ն ուժ են ստանում Աստծոյ որդիները, իմանալով՝ որ այդքա՛ն մօտ են Հօրը: Ուստի, ինչ էլ որ պատահի, ամուր եւ վստահ եմ Քո հետ, Տէր եւ Հայր իմ, որ վէ՛մ ես եւ գօրութիւն՝<sup>1</sup>:

10. Այս ամէնը ոմանց հարազատ կը թուայ, ոմանց՝ նորութիւն, բոլորի համար էլ՝ դժուարին ու տքնաջան: Յամենայն դէպս, քանի դեռ դրա ուժն ունեմ, չեմ դադարի քարոզել աղօթքի հոգիներ լինելու առաջնային անհրաժեշտութիւնը. միշտ, բոլոր դէպքերում եւ ամենատարբեր պարագաներում, որովհետեւ Աստուած մեզ երբեք չի լքում: Քրիստոնեային վայել չէ աստուածային մտերմութեան մասին մտածել որպէս պահեստային միջոցի, ծայրայեղ դէպքերի համար: Մի՞թէ երբեւէ կարող է մեզ արդար թուալ անտեսումը կամ արհամարհանքը այն անձանց նկատմամբ, որոնց սիրում ենք: Անշուշտ թէ՛ ո՛չ: Նրանց՝ որոնց սիրում ենք, մշտատեւ ուղղում են մեր խօսքերը, փափաքները, մտքերը. կարծես նրանք միշտ ներկայ են մեզ: Միեւնոյն գագուցումները պէտք է ունենանք նաեւ Աստծոյ նկատմամբ:

Տիրոջն այս կերպ փնտռելով, մեր օրն ամբողջովին կը վերածուի մտերմիկ ու վստահասիրտ գրոյցի: Սա այն է, որի մասին բազմաթիւ անգամներ գրել եմ ու հաստատել, ո՛չ էլ մտահոգում եմ կրկնողութեանս համար, որովհետեւ Տէրը մեզ ցոյց է տալիս – Իր իսկ օրինակով – որ սա՛ է հետեւելիք վարքագիծը. մշտատեւ աղօթք, առաւօտից մինչեւ երեկոյ, երեկոյից մինչեւ առաւօտ: Երբ գործերը դիւրաւ են յառաջ ընթանում, Նրան ասում ենք. «Շնորհակալ եմ, Աստուած իմ»: Իսկ երբ վրայ են հասնում դժուարին պահերը. «Տէ՛ր, մի՛ լքիր ինձ»: Եւ մեր այս Աստուածը, որ հե՛յ է եւ սրբով խոնարհ<sup>2</sup>, մոռացութեան չի մատնի մեր աղերսանքը, անտարբեր չի մնայ, Նա՛ որ ասել է. «Խնդրեցէք եւ կը փրուի ձեզ, փնտրեցէք եւ կը գտնէք, բարեցէք եւ ձեր առագ կը բացուի»<sup>3</sup>:

Հետեւաբար, բոլոր դէպքերի ու իրադարձութիւնների ետեւում Աստծուն տեսնելով, ջանանք մեր տեսադաշտից երբեք չկորցնել մեր գերբնական վախճանակէտը, լինի հաճելի՝ թէ տհաճ իրողութիւնների դիմաց, լինի մխիթարութիւնների՝ թէ սիրելի անձանց մահուամբ պատճառուած վհատութեան դիմաց: Նախեւառաջ, Հայր Աստծոյ հետ խօսակցութիւնը, Տիրոջ փնտռուածքը մեր հոգու կենտրոնում: Սա չնչին բան չէ, ո՛չ էլ նուազ կարեւորութիւն ունեցող. յատակ բացայայտումն ու դրսեւորումն է տեւական ներանձնական կեանքի, սիրոյ հարազատ ու անկեղծ երկխօսութեան: Մի գործողութիւն է, որը չի պատճառի ոչ մի տեսակի հոգեբանական ձեւազեղում, քանի որ, քրիստոնեաների համար, պէտք է որ ամբողջովին բնական լինի, ինչպէս սրտի բաբախումը:

<sup>1</sup> Հմմտ. 2Սմ 22, 2

<sup>2</sup> Մտթ 11, 29

<sup>3</sup> Ղկս 11, 9

11. Այս հիւսուածքի, քրիստոնէական հաւատքի այս կենդանի կտաւի մէջ ընդելուզուած են, գոհարների նման, ձայնային աղօթքները: Աստուածային բանաձեւեր. *Յայր Տէր ... , Ողորչն քեզ, Մարիամ ... , Փառք Յօր եւ Որդւոյ եւ Յոգւոյն Սրբոյ ...* : Կամ Աստուծոն եւ մեր Մօրն ուղղուած գովաբանութեան այն պսակը, որ Սուրբ Վարդարանն է: Կամ բազմաթիւ ու բազմաթիւ ա՛յլ, բարեպաշտութեամբ լի օրհնութիւններն ու աղօթքները, որոնք մեր քրիստոնէայ եղբայրները գործածել են առաջին ժամանակներից սկսած:

Սուրբ Օգոստինոսը, մեկնաբանելով 85րդ Սաղմոսի հատուածներից մէկը – Ողործիր ինձ, Տէ՛ր, ամբողջ օրն աղաղակում եմ դէպի Քեզ – , գրում է. «Ո՛չ միայն մէկ օր: "Ամբողջ օրը" խօսքերը հասկացիր "ամբողջ ժամանակի ընթացքում" իմաստով ... : Միայն մի մարդ տարածուած է մինչեւ աշխարհի վախճանը: Քրիստոսի անդամներն են, բոլոր դրանք՝ որ աղաղակում են. եւ ներկայիս, մինչ ոմանք արդէն հանգչում են Նրանում, ուրիշներն աղաղակում են. եւ հետագայում, երբ մենք կը հանգչենք, կ'աղաղակեն ուրիշները, իսկ նրանցից յետոյ՝ տակաւին ուրիշները»<sup>1</sup>: Ձեր սրտերին յուզմունք չի՞ պատճառում Արարչին մատուցուած այս փառաբանութեանը մասնակցելու միտքը, փառաբանութիւն՝ որն յաւերժանում է դարերի հերթափոխում: Քանի՛ցս մեծ է մարդը, երբ ինքն իրեն ճանաչում է որպէս Աստուծոյ նախընտրեալ արարած եւ Նրան է դիմում զօրհանապապ, իր երկրային պանդխտութեան իւրաքանչիւր պահին:

12. Օրուայ ընթացքում թող երբեք չպակասեն մի քանի ընթացքներ, որոնք յատուկ կերպով նուիրուած կը լինեն Աստուծոյ հետ երկխօսելուն, դէպի Նա վերամբարձելով մեր միտքը, առանց որ շուրթերի վրայ պարտադիր կերպով ի յայտ գան խօսքերը, քանի որ այդպիսի դէպքերում խօսքերը երգում են սրտում: Բարեպաշտութեան այս կանոնին ընծայենք ժամանակի բաւականաչափ հատուած, միշտ՝ սահմանուած միեւնոյն ժամին, եթէ հնարաւոր է: Եւ Տապանակի կողքին, ընկերակցելով Նրան, ով այնտեղ հաստատուել է յանուն Սիրոյ: Բայց եթէ սա հնարաւոր չէ, ուրեմն որեւիցէ վայրում, որովհետեւ մեր Աստուածն անճառելի կերպով բնակուած է շնորհի վիճակում գտնուող մեր հոգիներում: Քեզ խորհուրդ եմ տալիս, յամենայն դէպս, գնալ աղօթատուն, ամէն անգամ՝ որ կարող ես: Եւ ուշադրութիւն եմ դարձնում՝ աղօթատունը մատուռ չանուանելու, որպէսզի աւելի յստակ լինի, որ խօսքս վերաբերում է մի վայրի, ուր պէտք է ներկայ լինենք ո՛չ թէ պաշտօնական արարողութեան կեցուածքով, այլ՝ ներանձնական հոգեւոր ամփոփումով, մեր միտքը դէպի երկինք վերամբարձելու համար, համոզուած՝ որ Տապանակից Յիսուս տեսնում է մեզ, լսում, սպասում եւ առաջնորդում, որովհետեւ Նա այնտեղ է, իսկապէս ներկայ, խորհրդական երեւոյթների ներքոյ թաքնուած:

Ձեզնից իւրաքանչիւր ոք, եթէ կամենում է, կարող է իր սեփական ճանապարհը գտնել Աստուծոյ հետ կատարուած այս զրոյցի համար: Ինձ հաճելի չէ խօսել մեթոդների կամ բանաձեւերի մասին, որովհետեւ ինձ երբեք հաճելի չի եղել հարկադրել մարդկանց՝ տեղաւորուելու կարծրացած ծրագրաւորումների մէջ: Փորձել եմ օգնել բոլորին, մերձենալու Տիրոջը, յարգելով հոգիներից իւրաքանչիւրին այնպէս՝ ինչպէս որ է, իր սեփական նկարագրով ու իւրայատկութիւններով: Խնդրեցէ՛ք Տիրոջից, որ Իր ծրագրերը հաստատի ձեր կեանքում. ո՛չ միայն մտքում, այլ նաեւ սրտի խորքում եւ մեր ամբողջ արտաքին գործունէութեան մէջ: Վստահ եղէք, որ այդպիսով վերապահած կը լինէք ձեզ այն դառնութիւնների ու վշտերի մեծ մասից, որոնց ծնունդ է տալիս եսապաշտութիւնը, եւ ուժը կը զգաք ձեր չորսբոլորը սփռելու բարիքը: Քանի՛ քանի՛ նեղութիւններ են փարատում, երբ ներքուստ կանգնում ենք մեր Աստուծոյ կողքին, լա՛ւ մօտիկ, որը մեզ երբեք չի լքում: Վերստին նորոգում է, տարբեր ձեւակերպելով, այն սէրն Իրենների հանդէպ, հիւանդների, տարաբախտների, որն ասել է տալիս Յիսուսին. «Ի՞նչ է քո հետ

<sup>1</sup> Սբ. Օգոստինոս, *Enarrationes in Psalmos*, 85, 5 (PL 37, 1085).

պատահում»։ «Իմ հետ պատահում է այն, որ ... » եւ, իսկոյն, լոյսը, կամ առնուազն՝ ընդունելու ուժը, եւ խաղաղութիւնը։

Քեզ Վարդապետի հետ այս մտերմութեանը հրաւիրելով, խօսքս վերաբերում է յատկապէս դժուարութիւններին, որոնք ծնւում են քո ներսում, քանի որ մեր երջանկութեան խոչընդոտների մեծ մասը սերում է առաւել կամ նուազ ծածուկ հպարտութիւնից։ Ինքներս մեզ մեծ արժէք ունեցող մէկն ենք համարում եւ արտակարգ ձիրքերով օժտուած։ Իսկ երբ ուրիշները մեզ այդպիսին չեն կարծում, մեզ ստորացած ենք զգում։ Ահա՛ մի հիանալի առիթ՝ աղօթքին դիմելու եւ մեր սխալ մտքերն ուղղելու համար, համոզուած՝ որ երբեք ուշ չէ ուղեգիծը փոխելու համար։ Բայց մեծապէս պատշաճ է ու նպաստաւոր՝ այդ փոփոխութեանը սկիզբ տալ որքան հնարաւոր է շուտ։

Աղօթքի մէջ, շնորհի օգնութեամբ, հպարտութիւնը կարող է խոնարհութեան փոխակերպուել։ Եւ հոգու խորքում կը ծլարձակի իրական բերկրանքը, թէեւ դեռ առիթները կ'ունենանք զգալու, որ տակաւին ցեխ ենք կրում մեր թեւերի վրայ, մեր տրտմալի թշուառութեան տիղմը, որ սկսում է չորանալ։ Աւելի ուշ, անսանձ ցանկութիւնների զսպման օգնութեամբ, այդ ցեխը կը թափուի եւ կը կարողանանք շա՛տ բարձր սաւառնել, որովհետեւ Աստուծոյ ողորմութեան քամին մեզ նպաստաւոր կը լինի։

13. Տեսէք, որ Տէրը կամենում է առաջնորդել ձեզ սքանչելագարող ուղիներով, որոնք միաժամանակ աստուածային են եւ մարդկային, եւ որոնք գործնականում ճանապարհներն են երջանկասիրտ անձնուրացումի, վշտի մէջ բերկրանքի, ինքնամոռացումի։ «Եթէ մէկը կամենում է հեղեւել ինձ, թող ուրանայ իր անձը»<sup>1</sup>։ Սա մի առաջարկ է, որը բոլորս էլ լսել ենք։ Պէտք է որոշում կայացնենք նրան լրջօրէն հետեւելու. տրամադրուել այնպէս, որ Տէրը կարողանայ գործածել մեզ, որպէսզի մեզ աշխարհի բոլոր խաչմերուկներում դնելով – մենք Աստուծոյ մէջ լաւ եւ ամուր դրուած լինելով – կարողանանք լինել աղ, թթիւմոր, լոյս. որպէսզի դու Աստուծոյ մէջ լինես, լուսաւորելու, համ տալու, աճեցնելու եւ խմորելու համար։

Մի՛ մոռացէք, սակայն, որ մենք չենք այդ լոյսն արարողները. մենք այն ցոլացնում ենք միայն։ Մենք չենք, որ փրկում ենք հոգիներին, մղելով նրանց գործելու բարին. մենք պարզապէս գործիքներ ենք, առաւել կամ նուազ արժանի, Տիրո՛ջ փրկարար ծրագրերի։ Եթէ մտածէինք – թող դա երբեք չպատահի – , թէ բարին, որ գործում ենք, մեր իսկ գործն է, հպարտութիւնը կը վերադառնար, քողարկուած՝ առաւել քան երբեւէ. աղը կը կորցնէր իր համը, թթիւմորը կ'ապականուէր, լոյսը կը վերածուէր խաւարի։

## Ռերակասարներից մէկը

14. Քահանայութեանս այս երեսուն տարիներին, որոնց ընթացքում տոկուն հաստատամտութեամբ պնդել եմ աղօթքի անհրաժեշտութեան եւ մեր ամբողջ գոյութիւնը յարատեւ գոհաբանութեան վերածելու հնարաւորութեան վրայ, ոմանք ինձ հարցնում էին. «Բայց մի՞թէ հնարաւոր է միշտ այդպէս վարուել»։ Այո՛, հնարաւոր է։ Տիրոջ հետ այս միութիւնը մեզ աշխարհից չի բաժանում ու չի առանձնացնում, մեզ չի վերածում եզակի էակների, որոնք օտարացած են ժամանակների ընթացքից։

Եթէ Աստուած ստեղծել է մեզ, եթէ մեզ փրկել է, եթէ մեզ սիրում է այն աստիճան, որ մեր համար զոհում է Իր Միածին Որդին<sup>2</sup>, եթէ մեզ սպասում է – ամէ՛ն օր – ինչպէս առակում պատմուած հայրն էր սպասում իր անառակ որդուն<sup>3</sup>, ինչպէ՞ս կարող ենք մտածել՝ թէ չի փափաքում, որ Իր հետ վարուենք սիրով։ Ընդհակառակն, տարօրինակ կը

<sup>1</sup> Մտթ 16, 24

<sup>2</sup> Հմմտ. Յվհ 3, 16

<sup>3</sup> Հմմտ. Ղկս 15, 11-32

լինէր չխօսել Աստծոյ հետ, հեռանալ Նրանից, մոռանալ Նրան, գործել այնպիսի ուղղութիւններով, որոնք հակառակ են շնորհի անընդմէջ հասնող ազդակներին:

15. Կը կամենայի նաեւ, որ ի նկատի առնէիք փաստը, որ ոչ ոք չի խուսափում նմանողութեան ազդեցիկ ուժից: Մարդիկ, նոյնիսկ եթէ անգիտակցօրէն են վարուում այդպէս, շարժուում են միմեանց նմանուելու տեւական մտահոգութիւնից մղուած: Իսկ մենք, մի՞թէ մերժելու ենք Յիսուսին նմանուելու կոչը: Իւրաքանչիւր անձ ջանում է կամաց կամաց նոյնանալ այն բանի հետ, որն հրապուրուում է իրեն, այն տիպարի հետ, որն ընտրել է որպէս իր անձնական կանոն: Անձանց գործելակերպը արդիւնքն է գաղափարականի, որն իւրաքանչիւր ոք ձեւաւորում է: Մեր Ուսուցիչը Քրիստոսն է, Աստծոյ Որդին, Ամենասուրբ Երրորդութեան Երկրորդ Անձը: Քրիստոսին նմանուելով հասնում ենք Մէկ եւ Եռանձն Աստծոյ խորհրդի սիրոյ զեղման մէջ մտնելու հրաշալի հնարաւորութեանը:

Եթէ որոշակի պարագաներում ձեզ պակասում է Յիսուս Քրիստոսի հետքերին հետեւելու ուժը, մի քանի ընկերական խօսք փոխանակեցէք նրանց հետ, ովքեր Նրան անձամբ ճանաչել են մեր այս երկրի վրայ Նրա անցկացրած տարիների ընթացքում. նախեւառաջ Մարիամի հետ, որը Նրան բերեց մեզ, եւ Առաքեալների: «Յօնի ժամանակ երկրպագութեան եկած ուխտաւորների մէջ մի բանի հետնանալը կային: Սրանք մօտեցան Փիլիպոսին, որը գալիլիացիների Բեթսայիդա բաղաքից էր, աղէտուած էին նրան եւ ասում. "Ուզում ենք Յիսուսին տեսնել": Փիլիպոսը գնաց այդ մասին Անտիոքի ասելու: Անտիոքի ու Փիլիպոսը միասին գնացին Յիսուսին ասելու»<sup>1</sup>: Քաջալերական չէ՞ այս ամէնը: Այդ օտարերկրացիները չեն համարձակուում ներկայանալ Վարդապետին եւ մի լաւ միջնորդ են փնտռում:

16. Թերեւս մտածում ես, որ մեղքերդ բազմաթիւ են եւ որ Տէրը չի կարող լսել քեզ: Այդպէս չէ, որովհետեւ Նրա ողորմութիւնն ամէնառատ է: Իսկ եթէ, չնայած այս հրաշալի ճշմարտութեանը, զգում ես խեղճութեանդ ծանրութիւնը, վարուիր ինչպէս մաքսաւորը<sup>2</sup>. «Յէ՛ր, ահա՛ ես: Ինձ քեզ եմ յանձնում»: Ուշադրութիւն դարձրէք նաեւ այն բանին, թէ ինչ է կատարուում, երբ — ինչպէս մեզ պատմում է Մատթէոս Աւետարանիչը — Յիսուսի մօտ են բերում մի անգամալոյծի: Հիւանդը ոչինչ չի ասում: Այնտեղ է, Աստծոյ ներկայութեանը: Եւ Յիսուս, յուզուելով ի տես զղճումի, ի տես վշտի, նրա՝ ով գիտէ, որ ոչնչի արժանի չէ, անյապաղ բացայայտում է իր մշտատեւ ողորմութիւնը. «Վստահի՛ր, որդեակ, մեղքերդ ներուած են քեզ»<sup>3</sup>:

Սորհուրդ եմ տալիս քեզ, որ աղօթքիդ ընթացքում Աւետարանի դրուագներին մասնակցես որպէս միւս դերակատարներից մէկը: Զանա՛, նախեւառաջ, մտովին պատկերացնել տեսարանը կամ խորհուրդը, որը քեզ օգնելու է ամփոփուելու եւ խորհրդածելու: Ապա դրա վրայ կենտրոնացրու միտքդ, նկատի առնելով Վարդապետի կեանքի այս կամ այն յատկանիշը. Նրա Սրտի գորովը, Նրա խոնարհութիւնը, Նրա մաքրութիւնը, Հօր Կամքը կատարելու Նրա կերպը: Իսկ յետոյ պատմիր Նրան այն ամէնը, որ այս հարցերում սովորաբար պատահում է քեզ, այն՝ ինչ զգում ես, քո կեանքի դէպքերն ու իրողութիւնները: Եւ ուշադիր եղիր, որովհետեւ Նա թերեւս կը կամենայ ինչ որ մի բան ցոյց տալ քեզ. պահն է հոգեւոր ներանձնական առաջարկների, անդրադառնալու եւ հասկանալու, կամովին համոզուելու:

17. Աղօթքին սկիզբ եւ ընթացք տալու համար, սովոր եմ նիւթականացնելու մինչեւ իսկ ամենահոգեւոր իրականութիւնները: Սա մի մեթոդ է, որ թերեւս կարող է ձեզնից ինչ որ մէկին էլ օգտակար լինել: Մեր Տէրն այն գործածում էր: Նրան հաճելի էր ուսուցանել

<sup>1</sup> Թվհ 12, 20-22

<sup>2</sup> Հմմտ. Ղկս 18, 13

<sup>3</sup> Հմմտ. Մտթ 9, 2

Իրեն չըջապատող միջավայրից քաղուած առականերով. հովիւն ու ոչխարները, որթատունկն ու ոստերը, նաւակներն ու ուռկանները, սերմը՝ որը սերմնացանը ցանում է դաշտում ... : Մեր հոգիներում ցանուել է Աստուծոյ Խօսքը: Ինչպիսի՞ հող ենք նրա համար պատրաստել: Այնպիսին, որի մէջ առատ են քարե՞րը: Այնպիսին, որը լի է փշերո՞վ: Կամ թերեւս այնպիսի մի վայր, որը չափազանց ոտնակո՞խ է արուել սոսկ մարդկային, ծոյլ, եռանդից ու խոյանքից զուրկ քայլերով: Այնպէս արա՛, ո՛վ Տէր, որ հոգուս այգին լաւ հող ունենայ, պարարտ հող, վեհանձնօրէն դրուած անձրեւի ու արեւի տակ: Թող որ Քո ցանքը արմատներ նետի: Թող որ լաւորակ ցորենի հասկեր աճեցնի:

«Ես որթաբունկն եմ, իսկ դուք՝ ուռերը»<sup>1</sup>: Հասնում է Սեպտեմբերը եւ խաղողի տունկերը ծանրաբեռնուել են երկար ու նուրբ, ճկուն ու հանգոյցաշատ բարունակներով, որոնցից առատօրէն կախուած են բերքահաւաքի համար արդէն պատրաստ ողկոյզները: Ուշադրութիւն դարձրէք այդ ոստերին. այդքան բարետես են, որովհետեւ կենսահիւթ են ստանում բնից: Միմիայն այսպէս՝ մի քանի ամիս առաջուայ այդ փոքրագոյն հատիկները կարողացան վերածուել քաղցր ու հասուն պտղամսի, կարող՝ ուրախութեամբ լիացնելու մարդկանց հայեացքն ու սիրտը<sup>2</sup>: Գետնին տարածուած են մնում կտրուած փշոտ չոր ճիւղերը, որոնց հողը կամաց կամաց ծածկում է: Նրանք էլ էին ուռեր, բայց կենսահիւթ չունեն, չորացել են: Ամլութեան ամենաարտայայտիչ պատկերն են: «Որովհետեւ առանց ինձ ոչինչ չէք կարող անել»<sup>3</sup>:

18. Գանձը: Երեւակայեցէք բախտաւոր յայտնաբերողի վիթխարի ուրախութիւնը: Վերջացել են իր նեղութիւններն ու մտատանջութիւնները: Վաճառում է այն ամէնը, որ ունէր, եւ գնում է այդ հողատարածքը: Իր ամբողջ սիրտը դրուած է այնտեղ, ուր թաքցուած է իր հարստութիւնը<sup>4</sup>: Մեր գանձը Քրիստոսն է: Չպէտք է վարանենք ծովը թափելու այն ամէնը՝ ինչը որ խանգարում է մեզ Նրան հետեւելու: Եւ նաւակը, ի վերջոյ ազատուելով աւելորդ խճաւազից, ուղղակի կը նաւարկի մինչեւ Աստուծոյ Սիրոյ ապահով նաւահանգիստը:

Կրկնում եմ, որ աղօթելու բազմաթիւ կերպեր կան: Աստուծոյ որդիները կարիքը չունեն կարծր ու քարացած եւ նախասահմանուած մեթոդի՝ իրենց Հօրը դիմելու համար: Մէրը ստեղծագործ է, ճարտար. եթէ սիրում ենք, կը կարողանանք բացայայտել անձնական եւ ներանձնական ճանապարհներ, որոնք մեզ կ'առաջնորդեն դէպի այս անդադար երկխօսութիւնը Տիրոջ հետ:

Աստուած տայ, որ այս ամէնը, որի շուրջն այսօր խորհրդածեցինք, մեր հոգիների վրայով չանցնի ամառնային անձրեւի նման. մի քանի կաթիլ, կրկին արեւ եւ նորից չորութիւն: Աստուծոյ այս ջուրը պէտք է պաշարուի, արմատներին հասնի եւ առաքինութեան պտուղներ հասունացնի: Այսպէս կ'անցնեն մեր տարիները, հիւսուած՝ աշխատանքի եւ աղօթքի օրերով, Հօր ներկայութեանը: Եթէ ուժերի նուազում ենք զգում, դիմենք Ամենասրբուհի Մարիամի սիրոյն, որն աղօթքի ուսուցչուհին է, եւ Սուրբ Յովսէփին, որը մեզ հայր է եւ իշխանաւոր, եւ որին մենք մեծապէս պատուում ենք, որովհետեւ նա է՝ որ այս աշխարհում առաւելագոյն մտերմութիւնն ունեցաւ Աստուածածնի եւ – Ամենասրբուհի Մարիամից յետոյ – նրա աստուածային Որդու հետ: Նրանք մեր տկարութիւնը կը ներկայացնեն Յիսուսին, որպէսզի այն զօրութեան վերածի:

<sup>1</sup> Թվհ 15, 5

<sup>2</sup> Հմմտ. Սղմ 103, 15

<sup>3</sup> Թվհ 15, 5

<sup>4</sup> Հմմտ. Մտթ 6, 21

# ԴԷՄԻ ԱՐԲՈՒԹԻԱՒ

19. Յնցւում ենք, յուզւում, եւ մեր սիրտն աւելի արագ է բաբախում, երբ ուշադրութեամբ լսում ենք Պօղոս Առաքեալի աղաղակը. «Սա՛ է Աստուծոյ կամբը. ձեր սրբութիւնը»<sup>2</sup>: Այսօր, եւս մէկ անգամ, այն կրկին յիշեցնում եմ ինքս ինձ, ձեզ եւ բոլոր մարդկանց. սա՛ է Աստուծոյ կամբը, որ սուրբ լինենք:

Հոգիներին տալու համար խղաղութիւնը, բայց իրական խղաղութիւնը, կերպարանափոխելու համար երկիրը, փնտռելու համար մեր Տէր Աստուծոն աշխարհում եւ ընդմէջ աշխարհային իրողութիւնների, անհրաժեշտ է անձնական սրբութիւնը: Բազմաթիւ երկրների եւ հասարակական ամենատարբեր միջավայրերի անձանց հետ ունեցած խօսակցութիւններում յաճախ են ինձ հարցնում. «Ի՞նչ ունէք ասելիք մեզ, որ ամուսնացած ենք: Իսկ մե՞զ, որ աշխատում ենք ղաշտերում: Իսկ այրիները՞ն: Իսկ երիտասարդները՞ն»:

Բոլորին էլ պատասխանում եմ, որ մատուցելիք «միայն մի կերակրատեսակ» ունեմ, եւ յիշեցնում եմ, որ Յիսուս բարի լուրը քարոզեց բոլորին, առանց որեւէ զանազանութեան կամ տարբերակման: Մատուցման միայն մի աման եւ միայն մի կերակրատեսակ. «Ի՞նչ կերակուրն այն է, որ կարգաւ կամբը Նրա՝ ով առաքել է ինձ, եւ լրուծին հասցնեմ Իր գործը»<sup>3</sup>: Բոլորը կանչուած են սրբութեան, Տէրը սէր է ակնկալում իւրաքանչիւրից. երիտասարդներից ու տարեցներից, կուսակիցներից ու ամուսնացածներից, առողջներից ու հիւանդներից, գիտուններից ու անգրագէտներից, ուր էլ որ նրանք աշխատեն, ուր էլ որ նրանք գտնուեն: Աստուծոյ հետ մտերմութիւնն ու սերտ սրտակցութիւնը զարգացնելու միայն մի ձեւ կայ. յաճախել Նրան աղօթքով, խօսել Նրա հետ, Նրան յայտնել – սիրտ սրտի – մեր գործն ու սէրը:

## Խօսել Աստուծոյ հետ

20. «Դուք ինձ կ'ուղղէք ձեր հայցուածքները եւ ես կը լսեմ ձեզ»<sup>4</sup>: Մեր հայցուածքները Նրան ուղղում ենք զրուցելով, Նրան դիմելով: Այս պատճառով է, որ պէտք է գործադրենք Առաքեալի յորդորը. «Անդադար աղօթս արարեք»<sup>5</sup>. աղօթեցէք միշտ, ինչ էլ որ պատահի: «Ո՛չ միայն "սրբանց", այլ՝ ամբողջ սրբով»<sup>6</sup>:

Թերեւս մտածում էք, որ կեանքը միշտ չէ՝ որ հեշտ է եւ դիւրին, որ չեն պակասում տհաճութիւնները, վիշտն ու տառապանքը, տրտմութիւնները: Ձեզ կը պատասխանեմ, կրկին Պօղոս Առաքեալի խօսքերով, որ «ո՛չ մահը, ո՛չ կեանքը, ո՛չ հրեշտակները, ո՛չ իշխանութիւնները, ո՛չ ներկաները, ո՛չ գալիքները, ո՛չ զօրութիւնները, ո՛չ բարձրութիւնը, ո՛չ խորութիւնը, ո՛չ էլ ուրիշ որեւիցէ մի արարած, չի կարող տրեւէ հեռացնել ձեզ Աստուծոյ սիրուց, որը ձեր Յէր Յիսուս Քրիստոսի մէջ է»<sup>7</sup>: Ոչինչ չի կարող հեռացնել մեզ Աստուծոյ գործից, Սիրուց, մեր Հօր հետ մշտատեւ յարաբերութիւնից:

<sup>1</sup> Սուրբ Եօզեմարիա Էսքրիփան այս քարոզն արտասանել է 1967թ. Նոյեմբերի 26ին:

<sup>2</sup> 1Թս 4, 3

<sup>3</sup> Յվհ 4, 34

<sup>4</sup> Եբ 29, 12

<sup>5</sup> 1Թս 5, 17

<sup>6</sup> Սբ. Ամբրոսիոս, *Expositio in Psalmum CXVIII*, 19, 12 (PL 15, 1471).

<sup>7</sup> Հռմ 8, 38-39

Պատուիրել եւ յանձնարարել Աստծոյ հետ այս տեւական միութիւնը, արդեօք չի՞ նշանակում առաջարկել մի այնքա՛ն վսեմ գաղափարական, որն իրականում անհասանելի կարող է լինել քրիստոնեաների մեծամասնութեան համար: Այո՛, նպատակակէտն իրօք բարձր է ու վեհ, բայց ո՛չ անհասանելի: Արահետը, որն առաջնորդում է դէպի սրբութիւն, աղօթքի արահետն է: Եւ աղօթքը պէտք է հոգու ներսում արմատաւորուի ու ծաւալուի կամաց կամաց, փոքրիկ սերմնահատիկի նման, որը ժամանակի ընթացքում սաղարթախիտ ծառ կը դառնայ:

21. Սկսենք բանաւոր աղօթքներից, այն նոյն աղօթքներից, որոնք մեզնից շատերը սովորել են իրենց մանկութեան տարիներին. հրաշունչ եւ պարզունակ խօսքեր, ուղղուած Աստծուն եւ Նրա Մօրը, որը նաեւ մեր Մայրն է: Տակաւին այսօր, առաւօտեան եւ երեկոյեան, ո՛չ թէ երբեմն երբեմն, այլ սովորաբար, վերստին նորոգում եմ ինքնանուիրումի աղօթք-բանաձեւը, որը ծնողներս են ինձ սովորեցրել. «Ո՛վ բաղարկոյն Յիսուսի ի՞մ եւ Մայր ի՞մ, ի՞մ անձն ածբողոյժին քեզ ե՞մ ընծայում: Եւ որպէս ի՞մ որդիական սիրոյ վկայութիւն, այս օրուայ ընթացքում քեզ ե՞մ ընծայում ի՞մ աչքերը, ի՞մ ականջները, ի՞մ լեզուն, ի՞մ սիրտը ... »: Սա արդեօք — որոշակի չափով — սկիզբ չէ՞ հայեցողութեան, վստահասիրտ ինքնայանձնումի ակնյայտ դրսեւորում չէ՞: Ի՞նչ են միմեանց ասում սիրահարները, երբ հանդիպում են: Ինչպէ՞ս են վարում: Ձոհում են այն՝ ինչ որ են իրենք եւ այն՝ ինչ որ ունեն, սիրեցեալ անձի համար:

Նախ մի սլաքական աղօթք, ապա երկրորդը, իսկ յետոյ՝ երրորդը ... մինչեւ որ այս եռանդը կը թուայ քեզ անբաւարար, որովհետեւ խօսքերն աղքատիկ են ... եւ յայնժամ նրանց տեղը կը գրաւի աստուածային մտերմութիւնը, Աստծուն ուղղուած սեւեռուն հայեացքը, առանց դադարների եւ առանց երբեւէ յոգնելու: Այդպիսի պահերին մեզ թւում է՝ թէ ապրում ենք ազատագուրկ, բանտարկեալների նման: Մինչ հնարաւորինս մեծագոյն կատարելութեամբ, մեր սխալներով եւ մեր սահմանափակումներով հանդերձ, կատարում ենք մեր վիճակին եւ մեր աշխատանքին բնորոշ գործերը, հոգին կը կամենար փախչել: Ուղղում ենք առ Աստուած, ինչպէս երկաթը՝ մագնիսի ուժից ձգուած: Սկսում ենք սիրել Յիսուսին մի առաւել արդիւնաւէտ եղանակով, քաղցր թրթիռով:

22. «Կ'ապարեմ՝ ձեզ սրբութիւնից, ուր էլ որ ցուած լինէք»<sup>1</sup>: Ստրկութիւնից ազատում ենք աղօթքի միջոցով. ազատ ենք եւ մեզ ազատ ենք զգում, սիրահարուած հոգու երգի թեւերի վրայ, սիրոյ մի երգ, որը մեզ խթանում է փափաքելու չբաժանուել Աստծուց: Եւ երկրի վրայ ապրելու մի նոր կերպ, գերբնական, աստուածային, սքանչելահրաշ:

Յիշելով տասնվեցերորդ դարի քասթիլիացի բազմաթիւ մատենագիրներին, թերեւս մենք նոյնպէս կը կամենայինք ձաշակել նրանց ունեցած փորձառութիւնը. ապրում եմ, որովհետեւ չեմ ապրում, Քրիստոս Ինքն է, որ ապրում է ինձնում<sup>2</sup>:

Յայնժամ ուրախութեամբ է ընդունւում այս աշխարհում եւ երկար տարիներ շարունակ աշխատելու պարտականութիւնը, որովհետեւ Յիսուս սակաւաթիւ ընկերներ ունի երկրի երեսին: Չենք հրաժարուում պարտականութիւնից՝ ապրելու, մեր օրերը սպառելու — քամուելով մինչեւ վերջին քաթիլը — ի ծառայութիւն Աստծոյ եւ Եկեղեցու: Ահա այսպէս. ազատօրէն, յապարտութիւն փառաց որդուցն Աստուծոյ<sup>3</sup>, ապարտեամբն որով Քրիստոս ցձեզ ապարեցոյ<sup>4</sup>. Աստծոյ որդիների ազատութեամբ, որը Քրիստոս մեր համար շահեց մահանալով ինչպիսի վրայ:

23. Կարող է պատահել, որ սկզբից եւեթ բարձրանան փոշու ամպեր, ինչպէս նաեւ՝ որ մեր սրբացումի թշնամիները գործի դնեն հոգեբանական ահաբեկչութեան —

<sup>1</sup> Եր 29, 14

<sup>2</sup> Հմմտ. Գղտ 2, 20

<sup>3</sup> Հում 8, 21

<sup>4</sup> Գղտ 4, 31

իշխանութեան չարաշահումի – ռազմավարութիւն, այնքան բուռն եւ լաւ համակարգուած, որ իրենց անհեթեթ ուղու մէջ քաշեն մինչեւ իսկ նրան, ով երկար ժամանակ պահպանել է ամբողջովին ա՛յլ, առաւել տրամաբանական եւ առաւել ուղղամիտ վարք: Եւ թէեւ նրանց ձայնը նմանուում է խեղաթիւրուած զանգի հնչիւններին, որովհետեւ որակեալ մետաղով չի ձուլուել եւ ամբողջովին տարբերուում է հովուի կանչից, չարաշահութեամբ են գործածում խօսքը, որն ամենաթանկարժէք պարգեւներից մէկն է, որ մարդը ստացել է Աստուծոց, գեղեցկագոյն մի պարգեւ՝ Տիրոջ եւ Իր արարածների նկատմամբ սիրոյ եւ մտերմութեան վեհապանծ մտքեր արտայայտելու համար, այն աստիճան, որ ըմբռնում ենք պատճառը, որից մղուած՝ Յակոբոս Առաքեալը հաստատում է, որ լեզուն անիրաւութեան աշխարհ է<sup>1</sup>: Վնասները, որոնք կարող է պատճառել, բազմաթիւ են. ստութիւն, վարկաբեկում, անուանարկում, անարգանք, նախատինք, միտումնաւոր բամբասանք ու չարախօսութիւն:

### Քրիստոսի սրբազնաստուրբ մարդկութիւնը

24. Ինչպէ՞ս կարող ենք յաղթահարել այդ անպատեհութիւնները: Ինչպէ՞ս կարող ենք ամրապնդուել սկզբնական որոշման մէջ, որը մեզ սկսում է շատ ծանր թուալ: Մեզ որպէս ներշնչարան ունենալով այն բնօրինակը, որը մեզ ցոյց է տալիս Ամենասրբուհի Կոյսը, մեր Մայրը. շատ ընդարձակ ճանապարհ է սա, որն անհրաժեշտօրէն, սակայն, պէտք է անցնի Քրիստոսի միջով: Աստուծոն մօտենալու համար պէտք է ճանապարհ ընկնենք ճիշտ ճանապարհով, որը Քրիստոսի սրբազնաստուրբ մարդկութիւնն է: Այս իսկ պատճառով, միշտ խորհուրդ եմ տուել ընթերցել լաւ գրքեր, որ պատմում են Տիրոջ Չարչարանքները: Այդպիսի գրութիւնները, անկեղծ բարեպաշտութեամբ լի, մեզ օգնում են մտորել Աստուծոյ Որդու մասին, որը մարդ էր մեր նման եւ ճշմարիտ Աստուած, որ սիրում է եւ Իր Մարմնում տառապանքներ է կրում աշխարհի փրկութեան համար:

Ուշադրութիւն դարձրէք նաեւ քրիստոնեաների մօտ ամենաշատը արմատաւորուած բարեպաշտութիւններից մէկին, Սուրբ Վարդարանի աղօթքին: Եկեղեցին յորդորում է մեզ հայեցողական մտամփոփմամբ խորհրդածել նրա տասնհինգ խորհուրդների շուրջ, որպէսզի մեր մտքի եւ մեր երեւակայութեան մէջ տպաւորուի, Աստուածածնի բերկրանքի, վշտի եւ փառքի հետ, Տիրոջ զմայլելի օրինակը, Իր ծածուկ կեանքի երեսուն եւ քարոզչութեան երեք տարիների ընթացքում, Իր անարգալի Չարչարանքներում եւ Իր փառահեղ Յարութեան մէջ:

Հետեւել Քրիստոսին. սա՛ է գաղտնիքը: Ուղեկցել Նրան այնքա՛ն մօտիկից, որ հասնենք Նրա հետ ապրելու աստիճանի, ինչպէս առաջին տասներկուսը. այնքա՛ն մօտիկից, որ կարողանանք Նրա հետ նոյնանալ: Եթէ խոչընդոտներ չդնենք շնորհի ներգործութեան առաջ, շուտով կը հաստատենք, որ զգեստաւորուել ենք մեր Տէր Յիսուս Քրիստոսով<sup>2</sup>: Տէրն արտացոլում է մեր վարքում, ինչպէս հայելու մէջ: Եթէ հայելին այնպիսին է, ինչպիսին պէտք է որ լինի, կ'ընդունի եւ կը ցոլացնի մեր Փրկչի մեծապէս սիրելի դէմքն առանց այլայլելու այն, առանց ծամածուկելու: Եւ ուրիշները հնարաւորութիւնը կ'ունենան զմայլուելու Նրանով, հետեւելու Նրան:

25. Քրիստոսի հետ նոյնանալու ջանքում ինձ հաճելի է զանազանել չորս աստիճաններ. փնտռել Նրան, գտնել Նրան, յաճախել Նրան, սիրել Նրան: Դուք թերեւս տեսնում էք, որ գտնում էք տակաւին առաջին հանգրուանում: Փնտռեցէք Նրան տենչանքով, ձեր բոլոր ուժերով փնտռեցէք Նրան ինքներդ ձեզնում: Եթէ նման եռանդով գործէք, համարձակուում եմ երաշխաւորել ձեզ, որ Նրան արդէն իսկ գտել էք, եւ որ արդէն իսկ սկսել էք յաճախել Նրան եւ սիրել, եւ երկնքում ունենալ ձեր երկխօսութիւնը<sup>3</sup>:

<sup>1</sup> Թկբ 3, 6

<sup>2</sup> Հմմտ. Հռմ 13, 14

<sup>3</sup> Հմմտ. Փլպ 3, 20

Աղօթքս է առ Աստուած, որ վճռակամօրէն որոշենք մեր հոգուց ներս սնուցանել միակ ազնուափայլ ձգտումը, միակը՝ որն իրօք արժէ. ապրել Քրիստոսի հետ, ինչպէս իր Մայրը եւ Սուրբ Նահապետը, տենչալի բաղձանքով, ինքնանուիրումով, առանց որեւիցէ մի բան անտեսելու: Մասնակից կը լինենք աստուածային մտերմութեան երանութեանը – հոգեւոր ներանձնական մի ամփոփումով, որն ընդդիմակ եւ անհաշտ չէ մեր մասնագիտական եւ քաղաքացիական պարտականութիւնների հետ – եւ երախտագիտութիւն կը յայտնենք Նրան փափկանկատութեան ու յստակութեան համար, որով մեզ ուսուցանում է կատարել մեր երկնաւոր Հօր Կամքը:

26. Բայց մի՛ մոռացէք, որ Քրիստոսի հետ լինել եւ մնալ՝ նշանակում է, առանց կասկածի հնարաւորութեան, հանդիպել Նրա Խաչին: Եթէ մեզ յանձնում ենք Աստուծոյ ձեռքերին, յաճախակի է՝ որ Նա թոյլատրում է, որ ճաշակենք վիշտը, միայնութիւնը, հակառակութիւնները, զրպարտութիւնները, վարկաբեկումը, ծաղրանքը, ներսից եւ դրսից. որովհետեւ կամենում է կերպարանակից դարձնել մեզ իր պատկերին ու նմանութեանը, եւ մինչեւ իսկ թոյլ է տալիս, որ մեզ խենթ անուանեն եւ անմիտների տեղ դնեն:

Դա պահէն է սիրելու կրաւորական ինքնամերժումը, որը վրայ է հասնում – քողարկուած կամ բացէիբաց ու անպատկառ – երբ այն չենք սպասում: Չեն պակասում այնպիսիները, որոնք գառներին վիրաւորում են քարերով, որոնք պէտք է որ գայլերի դէմ նետէին. եւ ով հետեւում է Քրիստոսին, անձամբ եւ սեփական փորձառութեամբ տեսնում է, որ նրանք՝ ովքեր պէտք է որ սիրէին Նրան, Նրա հետ վարւում են մի կերպ, որն հասնում է անվստահութիւնից մինչեւ թշնամութեան, կասկածամտութիւնից մինչեւ ատելութեան: Դիտում եւ ունկնդրում են Նրան տարակուսանքով, ինչպէս մի ստախօսի, որովհետեւ չեն հաւատում, որ կարող է գոյութիւն ունենալ անձնական յարաբերութիւն Աստուծոյ հետ, որ կարող է գոյութիւն ունենալ հոգեւոր ներանձնական կեանք: Անհաւատ անաստուածների ու անտարբերների հետ, մինչդեռ, որոնք սովորաբար անամօթ են, աներես ու գոռոզամիտ, լցւում են սիրալիրութեամբ ու ըմբռնումով: Կարող է պատահել նաեւ, որ Տէրը թոյլ տայ՝ որ իր աշակերտը յարձակման ենթարկուի անձնական նախատինքների ու վիրաւորանքների գէնքով, որն երբեք պատիւ չի բերում իրեն գործածողին: Տիրոջ աշակերտին հարուածում են գործածելով հասարակաց վայրերը, ինչը որ միտումնաւոր եւ յանցագործ արդիւնքն է զանգուածային ու ստապատիր քարոզչութեան. քանի որ բոլորին յատուկ չէ արժանապատիւ քաղաքավարութեամբ ու չափաւորութեամբ օժտուած լինելը:

Նրանք՝ ովքեր պաշտպանում են մի անորոշ աստուածաբանութիւն եւ թոյլ, անսանձ բարոյականութիւն, նրանք՝ ովքեր իրենց քմահաճութեամբ կիրառում են մի տարակուսելի ծիսակատարում, հրապիներին վայել կանոնապահութեամբ եւ ղեկավարման անպատասխանատու մեթոդներով, տարօրինակ չէ՝ որ այսպիսիները խթանեն նախանձի դրսեւորումներ, կասկածներ, կեղծ մեղադրանքներ, վիրաւորանքներ, վատ վերաբերմունք, բռնութիւններ, չարչրկումներ, ստորացումներ, կեղծ բամբասանքներ եւ ամէն տեսակի ճնշումներ ու հալածանքներ ընդդէմ նրա՝ ով խօսում է միմիայն Յիսուս Քրիստոսի մասին:

Այս կերպ Յիսուս գեղակերտում է հոգիները նրանց՝ ովքեր իրենն են, չմոռանալով տալ նրանց հոգեւոր ներանձնական անդորրն ու բերկրանքը, որովհետեւ Յիսուսի աշակերտները շատ լաւ հասկանում են, որ միմեանց վրայ բարդուած հարիւր ստութիւններով դեւերն ի գորու չեն պատրաստելու գէթ մէկ ճշմարտութիւն. եւ նրանց կեանքում արձանագրում է համոզումը, որ իրենց հանգիստ կը զգան միմիայն երբ կ'որոշեն հրաժարուել յարմարաւէտութիւններից:

27. Տիրոջ սրբազնասուրբ մարդկութիւնն իսկապէս սիրելով եւ նրանով գմայլուելով, մէկ առ մէկ կը բացայայտենք Նրա Վէրքերը: Եւ կրաւորական մաքրագործումի այդ ժամանակահատուածներում, որոնք լի են վշտով, բայց եւ ուժգին ժամանակներ են, քաղցր ու դառն արցունքների, որոնք ջանում ենք թաքցնել, կարիքը կը զգանք ապաստանելու Նրա սրբազնասուրբ Վէրքերից իւրաքանչիւրի ներսում. մաքրագործուելու համար,

վայելքով ճաշակելու համար Նրա փրկարար Արիւնը, ամրապնդուելու համար: Այդ ապաստաններին կը հասնենք աղաւնիների նման, որոնք, ինչպէս ասում է Աստուածաշունչը<sup>1</sup>, ժայռի ճեղքերի ներսում են ապաստանում, երբ վրայ է հասնում փոթորիկը: Թաքնուած ենք այդ ապաստանի ներսում, այնտեղ գտնելու համար Քրիստոսի հետ մտերմութիւնը. եւ նկատում ենք, որ Նրա խօսքերը քաղցր են, իսկ տեսքը՝ գեղաշնորհ ու վայելուչ<sup>2</sup>, որովհետեւ «նրանք՝ ուժեր գիպեն, որ Նրա ձայնը քաղցր է ու արորժաւոր, նրանք են՝ ուժեր սրացել են Աւետարանի շնորհը, որը նրանց ասել է Կալիս. "Միայն Դու յաւիտենական կեանքի խօսքեր ունես"»<sup>3</sup>:

28. Չպէտք է կարծենք, թէ հայեցողութեան ճանապարհի ընթացքում կրքերը վերջնականորէն պապանձուել են: Կը խաբենք ինքներս մեզ, եթէ մտածենք՝ թէ Քրիստոսին փնտռելու փափաքը, Նրան գտած լինելու եւ Նրան յաճախելու իրականութիւնը, եւ Նրա Սիրոյ քաղցրութիւնը մեզ վերածում են անմեղանչական անձերի: Թէեւ դա ձեր իսկ փորձառութեամբ գիտէք, թողէք՝ որ յիշեցնեմ ձեզ: Աստուծոյ եւ մարդու թշնամին, սատանան, իր յաղթուած լինելու փաստի հետ չի համակերպուում, չի հանգստանում: Եւ մեր դէմ պատերազմներ է յարուցանում մինչեւ իսկ երբ հոգին հրաբորբոք բոցավառուած է Աստուծոյ սիրով: Սատանան գիտէ, որ այդ դէպքում անկումն աւելի դժուարին է, բայց գիտէ նաեւ, որ կը կարողանայ այդ հոգու խղճի դէմ սանձագերծել վհատութեան եւ յուսալքումի ծանր փորձութիւնը, եթէ յաջողութեան հասնի եւ այդ հոգին, թեկուզեւ թեթեւագոյն կերպով, մեղանչի Տիրոջ դէմ:

Եթէ կը կամենաք ընդունել խեղճ քահանայիս փորձառութիւնը, որն ուրիշ յաւակնութիւն չունի, այլ միայն՝ խօսել Աստուծոյ մասին, ձեզ խորհուրդ եմ տալիս, երբ մարմինը կամենում է ետ վերադարձնել կորցրած առանձնաշնորհումները, կամ հպարտութիւնն ապստամբում է եւ յամառորէն հրաժարում է հնազանդուել – ինչը որ առաւել վատթար է – շտապէք ապաստան գտնել աստուածային վէրքերի ներսում, որոնք Քրիստոսի Մարմնում բացել են դամբը, որոնցով Նրան դամել էին Խաչափայտին, եւ գեղարդը, որով խոցել էին Նրա կրծքալանջը: Ապաստան գտնելու գնացէք այնպէս եւ այն կերպ, որն աւելի է ազդում ձեր սրտին եւ ձեզ աւելի է յուզում. Տիրոջ Վէրքերի մէջ հեղէք ամբողջ մարդկային սէրը ... եւ ամբողջ աստուածային սէրը: Սա նշանակում է բազմալ միութիւնը, զգալ մեզ Քրիստոսի եղբայրներ, Իրեն արիւնակիցներ, որդիները միեւնոյն Մօր, որովհետեւ Նա է, որ մեզ առաջնորդում է Յիսուսի մօտ:

## Սուրբ Խաչը

29. Պաշտամունքի ու երկրպագութեան փափաք, հատուցման ծարաւ, ինչպէս հոգեթով անդորրի, այնպէս էլ տառապանքի մէջ: Ձեր կեանքի կեանքը կը դառնայ Յիսուսի խօսքը. «Ով չի վերցնում իր խաչը եւ հետեւում ինձ, ինձ արժանի չէ»<sup>4</sup>: Եւ Տէրը միշտ աւելի պահանջող է երեւում, հատուցում եւ ապաշխարութիւն է ակնկալում մեզմից, մինչեւ որ մղում է մեզ փորձառութիւնն ունենալու՝ Աստուծոյ համար ապրել կամենալու ջերմ փափաքի, Քրիստոսի հետ միասին գամուելով Խաչին<sup>5</sup>: «Այս գանձը», սակայն, «կրոււմ ենք կաւտ անօթնէրու», որոնք դիւրաբեկ են ու փափկակազմ, «որպէսզի յայտնի լինի, որ Նրա սօրուքեան առաւելութիւնն Աստուծոյ է եւ ո՛չ թէ մեզմից»<sup>6</sup>:

<sup>1</sup> Հմմտ. Երգ 2, 14

<sup>2</sup> Հմմտ. Երգ 2, 14

<sup>3</sup> Սբ. Գրիգոր Նիւսացի, *In Canticum homiliae*, 5 (PG 44, 879).

<sup>4</sup> Մտթ 10, 38

<sup>5</sup> Հմմտ. Գղտ 2, 19

<sup>6</sup> 2Կր 4, 7

«Ամեն ինչում նեղութիւն ենք կրում, առանց սակայն ծայր սարսփան նուսպելու. դժուարութիւնների ենք ենթարկուած, բայց ո՛չ յուսահարուած» կամ կենսական պաշարներից զրկուած. «հալածուած ենք, բայց ո՛չ լքուած. չարչարուած ենք, բայց ո՛չ կորուած. Յիսուսի ծառը միշտ մեր մարմիններում ենք կրում»<sup>1</sup>:

Մինչեւ իսկ երեւակայում ենք, թէ Տէրը չի լսում մեզ, թէ խաբոււմ ենք ինքներս մեզ, թէ լսում է միայն մեր ձայնի մենախօսութիւնը: Մեզ տեսնում ենք մի այնպիսի վիճակում, որ կարծես յենակէտ չունենք երկրի վրայ եւ լքուած ենք Երկնքից: Մեղքի, նաեւ ներելի մեղքի նկատմամբ մեր խորշումը, սակայն, իրական է ու ճշմարիտ, նաեւ՝ գործնական: Քանանացի կնոջ յամառութեամբ, գլուխներս խոնարհաբար կքում ենք մինչեւ գետին, նրա նման, որ երկրպագեց աղերսելով. «Յէ՛ր, օգնի՛ր ինձ»<sup>2</sup>: Յայնժամ կը փարատուի խաւարը, յաղթուած՝ Սիրոյ լոյսով:

30. Աղաղակելու պահն է. «Յիշի՛ր խոստումներդ, որ տուել ես ինձ, որոնցով պարգեւել ես ինձ յոյս: Սա է մխիթարութիւնը ոչնչութեանս մէջ, որ կեանքս ուժով է լցնում»<sup>3</sup>: Տէրը կամենում է, որ մեր յոյսերն իր վրայ հաստատենք, ամէն ինչում. յստակ կերպով տեսնում ենք, որ առանց իրեն ոչինչ չենք կարող<sup>4</sup>, եւ որ իր հետ կարող ենք ամէն ինչ<sup>5</sup>: Ամրապնդում է միշտ իր ներկայութեանս ապրելու եւ գործելու մեր վճռական վճռական որոշումը<sup>6</sup>:

Աստծոյ յստակատեսութիւնն ունենալով մեր մտքում, որը թէեւ թւում է մատնուած անգործունէութեան ու պարապորդութեան, մեր առջեւ անկասկածելի է երեւում, որ եթէ Արարիչը հոգ է տանում բոլորի նկատմամբ – նաեւ իր թշնամիների – , քանի՛ցս առաւել հոգ կը տանի իր մտերիմների նկատմամբ: Համոզոււմ ենք, որ ո՛չ մի չարիք եւ ո՛չ մի հակառակութիւն գոյութիւն չունի, որ չկատարուի վերջնական բարիքի նպատակով. այսպիսով, մեր հոգում առաւել եւս ամրապնդոււմ են բերկրանքն ու խաղաղութիւնը, որոնք մարդկային ո՛չ մի պատճառ չի կարող երբեւէ խլել մեզնից, քանի որ այս «այցելութիւնները» միշտ էլ թողնում են մեզ ինչ որ մի բան իրենից, աստուածային ինչ որ մի բան: Գովաբանելու ենք մեր Տէր Աստծուն, որը մեծամեծ եւ անքննելի եւ փառաւոր եւ հրաշակերտ գործեր է կատարում մեզնում<sup>7</sup>, եւ հասկանալու ենք, որ ստեղծուել ենք անսահմանափակ զանձն ունենալու կարողութեամբ<sup>8</sup>:

## Ամենասուրբ Երրորդութիւնը

31. Սկսել էինք բանաւոր աղօթքներով, պարզունակ, հմայիչ, որոնք սովորել ենք մեր մանկութեան տարիներին եւ որոնք երբեք չենք կամենայ մոռացութեան մատնել: Աղօթքը, մանկական այս միամտութեամբ սկսուած, արդ յառաջ է ընթանում ընդարձակ գետի նման, հանդարտ ու վստահ, քանի որ հետեւում է մտերմութեան ճանապարհին Նրա հետ, ով ասել է. «Ես եմ ճանապարհը»<sup>9</sup>: Եթէ սիրում ենք Քրիստոսին այսպէս, եթէ աստուածային համարձակութեամբ ապաստանում ենք Նրա կրծքալանջում գեղարդի

<sup>1</sup> 2Կր 4, 8-10

<sup>2</sup> Մտթ 15, 25

<sup>3</sup> Հմմտ. Սղմ 118, 49-50

<sup>4</sup> Հմմտ. Յվհ 15, 5

<sup>5</sup> Հմմտ. Փլպ 4, 13

<sup>6</sup> Հմմտ. Սղմ 118, 168

<sup>7</sup> Հմմտ. Յոբ 5, 9

<sup>8</sup> Հմմտ. Իմս 7, 14

<sup>9</sup> Յվհ 14, 6

բացած վերքում, կ'իրականանայ Վարդապետի խոստումը. «Եթէ մէկն ինձ սիրում է, կը պահի իմ խօսքը, եւ իմ Յայրը կը սիրի նրան եւ նրա ծօր կը գանք եւ նրանում կը հաստատենք մեր բնակութիւնը»<sup>1</sup> :

Սիրտն, այնժամ, զգում է կարիքը՝ գանազանելու Աստուածային Անձերը եւ երկրպագելու նրանց մէկ առ մէկ: Որոշակի առումով, այս բացայայտումը, որը հոգին կատարում է գերբնական կեանքում, նման է մանկան փորձառութեանը, որն աչքերը բացում է գոյութեան առաջ: Հոգին սիրալիր կերպով խօսակցութեան է բռնում Հօր հետ, Որդու հետ, Սուրբ Հոգու հետ: Եւ յօժարութեամբ ենթարկում է կենարար Մխիթարչի ներգործութեանը, որը մեզ տրւում է առանց մեր արժանիքի. գերբնական պարգեւներն ու առաքինութիւնները:

32. Սրբնթաց վազել ենք «եղգերուի նման, որը փափաքում է զրեւի աղբիւրները»<sup>2</sup>. պապական, ցամաքած բերանով, կարծես չորացած լինենք: Կամենում ենք խմել այդ կենդանի ջրի աղբիւրից: Առանց տարօրինակ բաներ անելու, մեր առօրեայի ընթացքում թողնում ենք, որ մեզ քշի ու տանի առատ ու ջինջ այս հոսանքը թարմ ջրերի, որոնք բխում են «ի կեանն յաւիտեանական»<sup>3</sup>: Խօսքերը նուազում են, լեզուն չի կարողանում արտայայտուել. միտքը նոյնպէս հանդարտ անդորրի մէջ է յայտնւում: Խօսելու եւ ճառելու պահը չէ, այլ՝ զմայլուելու: Եւ հոգին եւս մէկ անգամ պոռթկում է մի նոր երգով, որովհետեւ զգում է եւ գիտէ, որ իրեն փոխադարձում է Աստուծոյ սիրալիր հայեացքը, օրուայ իւրաքանչիւր վայրկեանին:

Չեմ ակնարկում բացառիկ ու արտասովոր իրավիճակների: Են, շատ լաւ կարող են լինել մեր հոգու սովորական երեւոյթներ. որպէս սիրոյ մի խենթութիւն, որն, առանց ցուցադրութեան, առանց արտառոցութեան, սովորեցնում է մեզ տառապել եւ ապրել, որովհետեւ Աստուած մեզ պարգեւում է Իմաստութիւնը: Յառաջ ընթանալով նեղ արահեպով, որն առաջնորդում է դէպի կեանք<sup>4</sup>, որքա՛ն անդորր, յայնժամ, եւ որքա՛ն խաղաղութիւն:

33. Ճգնողութի՞ւն: Խորհրդագագացութի՞ւն: Ես այս հարցով չեմ մտահոգւում: Ինչ էլ որ լինի, ճգնողութիւն կամ խորհրդագագացութիւն, ի՞նչ կարեւորութիւն ունի: Աստուծոյ շնորհն է: Եթէ դու ջանում ես խորհրդածել, Տէրը քեզ չի մերժի Իր օգնութիւնը: Հաւատք եւ հաւատքի գործեր: Գործեր, որովհետեւ Տէրը – սկզբից եւեթ համոզուեցիր սրան եւ ես էլ արդէն ընդգծեցի սա – միշտ աւելի պահանջող է: Սա արդէն իսկ հայեցողութիւն է, սա արդէն իսկ միութիւն է: Այսպիսին պէտք է լինի բազում քրիստոնեաների կեանքը, որոնք ընթանում են իրենց սեփական հոգեւոր ճանապարհով – ճանապարհներն անթիւ են ու անհամար – ընդմէջ աշխարհային զբաղմունքների, թերեւս եւ ոչ իսկ գիտակից լինելով դրան:

Մի աղօթք եւ մի վարքագիծ, որոնք մեզ չեն անջատում մեր սովորական գործերից, այլ՝ առաջնորդում են մեզ առ Աստուած ընդմէջ ազնուաբար երկրային գործերի: Առ Աստուած վերամբարձելով իր բոլոր գործերը, արարածն աստուածացնում է աշխարհը: Չեզ բազմաթիւ անգամներ պատմել եմ Միդաս արքայի առասպելը, որը ոսկու էր վերափոխում այն ամէնը՝ ինչին որ հպւում էր: Չնայած մեր անձնական սխալներին, այն ամէնը՝ ինչին որ հպւում ենք, կարող ենք վերափոխել գերբնական արժանիքների ոսկու:

34. Տէրն այսպէս է վարւում: Երբ որդին վերադառնում է, իր ամբողջ ունեցուածքը անառակ զեխութեամբ վատնելուց եւ մանաւանդ՝ իր հօրը մոռացութեան մատնելուց յետոյ, հայրն ասում է. «Արա՛գ, այստեղ բերք անենագեղեցիկ պտուղները եւ հազրեք նրան: Մարանի դրեք նրա ծափին եւ կօշիկներ հազրեք նրա ոտքերին: Վերցրեք գեր հորթը եւ ծորթեցեք: Թող որ բոլորը ուրեմ եւ

<sup>1</sup> Յվհ 14, 23

<sup>2</sup> Սղմ 41, 2

<sup>3</sup> Հմմտ. Յվհ 4, 14

<sup>4</sup> Մտթ 7, 14

խնդրք անեն»<sup>1</sup>: Տէրը, որ մեր Հայրն է, երբ Իրեն ենք դիմում զղջումով, հարստութեան է վերափոխում մեր չքաւորութիւնը, ուժի՝ մեր տկարութիւնը: Ինչե՞ր է արդեօք պատրաստում մեր համար, եթէ չենք լքում Իրեն, եթէ անդադար յաճախում ենք Իրեն, եթէ Իրեն ուղղում ենք գործերով փաստուած գորովի խօսքեր, եթէ Իրենից խնդրում ենք ամէն բան, վստահ Իր ամենակարողութեանն ու Իր ողորմութեանը: Միմիայն որովհետեւ Իր որդին վերադարձաւ – Իրեն դաւաճանա՛ծ որդին – Նա տօնախմբութիւն կազմակերպեց: Ինչե՞ր արդեօք կը պարգեւի մեզ, եթէ ջանանք միշտ Իր կողքին մնալ:

Զթողենք, ուստի, որ մեր վրայ բացասական ազդեցութիւն ունենայ յիշողութիւնը վիրաւորանքների, որոնք թերեւս ստացել ենք անցեալում, ստորացումների, որոնց պատճառով տառապել ենք – որքան էլ որ դրանք անարդարացի եղած լինեն, կամ անբարեկիրթ ու կոպիտ – , որովհետեւ Աստծոյ որդու համար վայելուչ եւ պատշաճ չէ միշտ պատրաստ պահել գրանցումների մի մատեան, կրած վնասների ցուցակով: Չենք կարող մոռանալ Քրիստոսի օրինակը, եւ մեր քրիստոնէական հաւատքը չենք կարող փոխել զգեստի նման. այն կարող է տկարանալ, կամ ամրապնդուել, կամ էլ՝ ամբողջովին կորել: Այս գերբնական կեանքի շնորհիւ հաւատքը զօրանում է եւ հոգին սարսափում է՝ տեսնելով մարդկային ողորմելի թշուառութիւնը, երբ մարդիկ հեռանում են աստուածայինից: Եւ ներում է, եւ երախտագիտութիւն յայտնում. «Աստուած իմ, եթէ դիտում եմ իմ խեղճ կեանքը, ոչ մի առիթ չեմ գտնում անապարծութեան, առաւել եւս նուազ՝ հպարտութեան համար: Փոխարէնը բազմաթիւ պատճառներ եմ գտնում միշտ խոնարհութեամբ ու զղջումով ապրելու համար: Շատ լաւ գիտեմ, որ ամենաբարձր փառքը ծառայելն է»:

## Կենդանի աղօթք

35. «Ուրքի եմ ելնելու եւ շրգելու եմ բաղաբով մէկ. փողոցներում եւ հրապարակներում փնտրելու եմ նրան, ու՞մ սիրում եմ»<sup>2</sup> ... : Եւ ո՛չ միայն քաղաքով մէկ. շրջելու եմ աշխարհն ամբողջ – բոլոր ազգերի եւ բոլոր ժողովուրդների միջով, արահետներով ու կածաններով – ձեռքբերելու համար հոգու խաղաղութիւնը: Եւ այն գտնելու եմ ամէնօրեայ աշխատանքներում, որոնք խոչընդոտ չեն ինձ համար. ընդհակառակն, առաջնորդ են եւ առիթ, սիրելու համար միշտ աւելի, միանալու համար միշտ աւելի իմ Աստծուն:

Իսկ երբ մեր առջեւ թակարդ է լարում, ուժգին, վհատութեան եւ յուսալքումի փորձութիւնը, ինչպէս նաեւ՝ հակադրութիւնների, պայքարի, տառապանքի, հոգու խորքում մի նոր գիշերուայ, Սաղմոսերգուն մեր շուրթերին եւ մեր մտքին է դնում այս խօսքերը. «Նրա հետ եմ նեղութիւնների ժամանակ»<sup>3</sup>: «Ի՞նչ արժէ, Յիսո՛ւս, իմ խաչը Քո Խաչի համեմատ: Ի՞նչ են իմ քերթուածքները Քո վէրքերի դիմաց: Ի՞նչ արժէ, Քո վիթխարի, մաքուր ու անսահմանափակ Միւրոյ համեմատ, այն փոքրիկ բռնը, որ Դու դրել ես իմ ուսերին»: Եւ ձեր սրտերը, եւ իմ սիրտը, լցում են սուրբ տենչանքով, մինչ խոստովանում ենք Նրան – գործերո՛վ – որ ծեռնւմ ենք Սիրուց<sup>4</sup>:

Ծնւում է Աստծոյ հանդէպ մի ծարաւ, հոգեկան ներքին մի փափաք՝ հասկանալու Նրա արցունքները, տեսնելու Նրա ժպիտը, Նրա Դէմքը ... : Կարծում եմ, որ մտքերս արտայայտելու լաւագոյն կերպը վերստին կրկնելն է, Աստուածաշնչի խօսքերով. «Ինչպէս եղգերուն փափաքում է գոտի աղբիւրները, այդպէս հոգիս փափաքում է Թե՛ս, ո՛վ Աստուած»<sup>5</sup>: Եւ հոգին Աստծոյ մէջ գործում եւ վարւում է «աստուածացած». քրիստոնեան յայնժամ դառնում է ծարաւած ճամփորդը, որն իր շուրթերը վերջապէս զովացնում է աղբիւրի ջրով<sup>6</sup>:

<sup>1</sup> Ղկս 15, 22-23

<sup>2</sup> Երգ 3, 2

<sup>3</sup> Սղմ 90, 15

<sup>4</sup> Հմմտ. Երգ 5, 8

<sup>5</sup> Սղմ 41, 2

<sup>6</sup> Հմմտ. Սիր 26, 12

36. Այս նուիրման մէջ, առաքելական եռանդը բոցավառուում է, օրըստօրէ աճում է՝ ուրիշների եւս փոխանցելով այս փափաքը – քանի որ բարին անգապելի ծաւալւում է: Անհնարին է, որ մեր այս խեղճ էութիւնը, Աստուծոյն մօտիկ գտնուելով չբռնկուի տենչանքով՝ ամբողջ աշխարհով մէկ սերմանելու բերկրանքն ու խաղաղութիւնը, ամէնուր եւ ամէնքին յագեցնելու Քրիստոսի բացուած կրօնալանջից բխող փրկարար ջրերով<sup>1</sup>, յանուն Սիրոյ սկսելու եւ իրենց կատարումին հասցնելու իր բոլոր պարտականութիւնները:

Նախապէս խօսեցի վշտի, տառապանքների, արցունքների մասին: Ինքս ինձ չեմ հակասում այժմ հաստատելով, որ աշակերտի համար, որը սիրավառ կերպով փնտռում է Վարդապետին, տրամութիւնների, տառապանքների, վշտի համը ամբողջովին տարբեր է. անհետանում են, երբ իրօք ընդունում ենք Աստուծոյ Կամքը, երբ յօժարութեամբ կատարում ենք իր ծրագրերը, հաւատարիմ որդիների նման, թէեւ թւում է՝ թէ նեարդերը կտրուելու եզրին են եւ տանջանքը թւում է անտանելի:

## Ամէնօրեայ կեանք

37. Կրկին հաստատում եմ, որ չեմ ակնարկում քրիստոնէաբար ապրելու արտակարգ կերպերի: Մեզնից իւրաքանչիւր ոք թող խորհրդածի այն ամէնի մասին, ինչ Աստուած արել է իր համար, եւ թէ ինչպէս է ինքը պատասխանել դրան: Եթէ անձնական այս քննութեան մէջ քաջ ենք ու արիասիրտ, կը տեսնենք այն՝ ինչ մեզ տակաւին պակասում է: Երէկ յուզուեցի, լսելով մի ճապոնացի նորադարձի մասին, որը քրիստոնէական վարդապետութիւն է ուսուցանում իր ընկերներին, որոնք Քրիստոսին դեռ չեն ճանաչում: Եւ ինձ մի տեսակ յանցաւոր զգացի: Կարիքն ունենք առաւել հաւատք ունենալու. մե՞ծ հաւատք: Եւ, հաւատքի հետ, կ'ունենանք նաեւ հայեցողութիւնը:

Հանդարտօրէն կրկին խորհրդածեցէք աստուածային այն խօսքի շուրջ, որ վրդովում է հոգին, բայց միաժամանակ՝ նրան ճաշակել է տալիս մեղրի քաղցրութիւնը. «Փրկեցի զքեզ, եւ կոչեցի քեզ պանուն բն՝ թէ ի՞մ ես»<sup>2</sup>. փրկեցի քեզ եւ քեզ անունովդ կանչեցի. դու իմն ես: Չզողանանք Աստուծոյ այն՝ ինչ իրենն է: Աստուած, որ սիրեց մեզ մեր համար մահանալու աստիճան, որ ընտրեց մեզ ի յաւիտենից, աշխարհի ստեղծումից առաջ, որպէսզի սուրբ լինենք իր առաջ<sup>3</sup>. Եւ որ մշտապէս առիթներ է տալիս մեզ մաքրագործուելու եւ գործի լծուելու համար:

Իսկ եթէ տակաւին որոշակի կասկածներ ունենայինք, ահա մի ա՛յլ ապացոյց իր իսկ շուրթերից. «Դուք չե՛ք, որ ընդրե՛լ էք ինձ, այլ ես եմ ընդրե՛լ ձեզ. եւ ձեզ սահմանե՛լ եմ, որպէսզի գնաք եւ պրոպագանդեք. եւ ձեր պրոպագանդան մնայուն լինի»<sup>4</sup>, ձեր՝ հայեցողական հոգիներիդ աշխատանքի պտուղը: պտուղը:

Հաւատք, հետեւաբար, գերբնական հաւատք: Երբ հաւատքը սասանւում է, մարդը ձգտում է երեւակայել մի հեռաւոր Աստուած, որը կարծես թէ հոգ չի տանում իր որդիների նկատմամբ: Կրօնի մասին մտածում է որպէս արտաքին ինչ որ մի բանի, որին դիմում են երբ ուրիշ միջոցներ ու պաշարներ չկան. սպասում է, այդպիսի պարագաներում, եւ անհասկանալի է՝ թէ ի՛նչ հիմքի վրայ, հանդիսաւոր բացառիկ յայտնութիւններ, արտասովոր դէպքեր ու իրադարձութիւններ: Մինչդեռ երբ հաւատքը թրթռում է հոգու խորքում, նկատում ենք, որ քրիստոնէայի քայլերը չեն հեռանում որեւիցէ մարդու բնական ու ամէնօրեայ կեանքից: Եւ որ մեծ սրբութիւնը, որն Աստուած ակնկալում է մեզնից, ամփոփուած է ամէն օրուայ փոքրիկ իրողութիւններում, այստե՛ղ եւ ա՛յժմ:

<sup>1</sup> Հմմտ. Յվհ 19, 34

<sup>2</sup> Ես 43, 1

<sup>3</sup> Հմմտ. Եփս 1, 4

<sup>4</sup> Հմմտ. Յվհ 15, 16

38. Ինձ հաճելի է խօսել ճանապարհի, քայլքի մասին, քանի որ ճամփորդութեան մէջ ենք, ուղղուած դէպի Երկնքի տունը, դէպի մեր Հայրենիքը: Բայց իմացէք, որ ճանապարհները, թէեւ կարող են իւրապատուկ դժուարութեան որոշակի հատուածներ ունենալ, թէեւ երբեմն կարող են մեր հայեացքի առջեւ տարածել մի գետ կամ անցնել գրեթէ անթափանցելի մի փոքրիկ անտառով, առաւել յաճախ՝ ճանապարհների յատուկութիւնները համընդհանուր են, սովորական, առանց անակնկալների: Վտանգն, այդպիսի պարագաներում, պարզ իրողութիւններն արհամարհելն է, մտածելը՝ որ ամէն օրուայ, ամէն պահի իրողութիւններում Աստուած ներկայ չէ, որովհետեւ դրանք չափազանց պարզ են, չափազանց «սովորական»:

Այն երկու աշակերտները, որոնց մասին պատմում է Ղուկաս Աւետարանիչը, քայլում էին դէպի Էմմաուս: Նրանց քայլերը բնական էին, ինչպէս ուրիշ շատերի քայլերը, որոնք անցնում էին այդ նոյն ճանապարհով: Եւ այնտեղ, նոյնքան բնականութեամբ, նրանց յայտնուում է Յիսուս, եւ քայլում է նրանց կողքին, ներգրաւելով նրանց մի խօսակցութեան մէջ, որը թեթեւացնում է յոգնութիւնը: Ինձ համար հաճելի է պատկերացնել տեսարանը. արդէն ուշ երեկոյ է եւ փչում է մի թեթեւ զով քամի: Շուրջըրըրը՝ արդէն բարձր ցորենի արտեր եւ մթնշաղի մէջ արծաթափայլ ճիւղերով հնամենի ձիթենիներ:

Ճանապարհին՝ Յիսուս: Տէ՛ր, միշտ էլ այնքա՛ն մեծ ես: Բայց ինձ յուզում ես, երբ բարեհաճութեամբ հետեւում ես մեզ, փնտռում, մեր ամէն օրուայ երթեւեկում: Տէ՛ր, պարգեւիր ինձ հոգու թարմութիւն, մաքուր հայեացք, ջինջ ու յստակ միտք, որպէսզի կարողանամ ճանաչել Քեզ, երբ գալիս ես առանց Քո փառքի արտաքին նշաններից որեւէ մէկի ընկերակցութեամբ:

39. Միասին անցած ճանապարհը աւարտին է մօտենում գիւղի մօտակայքում, եւ երկու աշակերտները, որոնք, առանց նկատելու իսկ, իրենց սրտի ամենախորքում խոցուել են մարդացած Աստծոյ խօսքից եւ սիրուց, վշտանում են, որ պէտք է բաժանուեն Նրանից: Յիսուս, իրօք, ողջունում է նրանց, ցոյց փալով, որ պէտք է շարունակի Իր ճանապարհը<sup>1</sup>: Նա, որ Տէրն է, երբեք չի կամենում ստիպել հոգիներին: Կամենում է, որ ազատօրէն հրաւիրենք Իրեն, երբ նշմարել ենք մաքրութիւնը Միւրոյ, որը Նա դրել է մեր հոգիներում: Նրան պէտք է գրեթէ ուժով պահենք. «Մեզ հետ մնա, քանի որ արդէն մութ է եւ գիշերն արդէն վրայ է հասնում»<sup>2</sup>:

Միշտ նոյնն ենք. քիչ համարձակ, թերեւս անկեղծութեան բացակայութեան, թերեւս էլ ամօթխածութեան պատճառով: Բայց մեր ներսում մտածում ենք. մեզ հետ մնա, որովհետեւ խաւարը տարածւում է մեր հոգու վրայ, եւ միայն Դու ես լոյսը: Միայն Դու կարող ես խաղաղեցնել տագնապը, որը սպառում է մեզ: Որովհետեւ «բոլոր գեղեցիկ եւ արժանապարհ իրողութիւնների շարքին, լաւ գիտենք՝ թէ որն է առաջինը. միշտ ունենալ Աստծուն»<sup>3</sup>:

Եւ Յիսուս մնում է: Մեր աչքերը բացւում են Կղէովպասի եւ նրա ընկերոջ աչքերի նման, երբ Յիսուս բեկում է հացը: Եւ եթէ նոյնիսկ Նա կրկին անհետանայ մեր տեսողութիւնից, ընդունակ կը լինենք, նրանց նման, կրկին ճանապարհ ընկնելու – արդէն գիշեր է – ուրիշների եւս Նրա մասին պատմելու, որովհետեւ այդքան բերկրանքի համար մէկ սիրտը բաւական չէ: Դէպի Էմմաուս: Տէրը քաղցրագոյն է դարձրել այս անունը: Եւ Էմմաուս է աշխարհն ամբողջ, որովհետեւ Տէրը բացել է երկրի աստուածային ճանապարհները:

<sup>1</sup> Ղկա 24, 28

<sup>2</sup> Ղկա 24, 29

<sup>3</sup> Սբ. Գրիգոր Նազիանզացի, Epistolae, 212 (PG 37, 349).

## Հրեշտակների հետ

40. Տիրոջից խնդրում եմ, որ պարզեւի մեզ, քանի դեռ երկրի վրայ ենք, երբեք չբաժանուել աստուածային ճամփորդից: Սրա համար պէտք է սերտացնենք նաեւ մեր մտերմութիւնը Պահապան Հրեշտակների հետ: Բոլորս էլ ընկերակցութեան կարիքն ունենք. երկնային եւ երկրային ընկերակցութիւն: Բարեպաշտ եղէք Պահապան Հրեշտակների նկատմամբ: Շատ մարդկային իրականութիւն է ընկերութիւնը, բայց նաեւ շատ աստուածային. ինչպէս մեր կեանքը, որն աստուածային է եւ մարդկային: Յիշեցէք Տիրոջ խօսքը. «Ձեզ այլեւ ծառաներ չեմ անուանում, այլ՝ ընկերներ»<sup>1</sup>: Նա մեզ ուսուցանում է մտերմութիւն ունենալ Աստուծոյ մտերմների հետ, որոնք արդէն Երկնքում են, եւ արարածների հետ, որոնք ապրում են մեր կողքին, նաեւ նրանց հետ, ովքեր հեռու են թւում Տիրոջից, նրանց հոգում փափաք եւ կամք առաջացնելու համար՝ հետեւելու ճիշտ ճանապարհին:

Կամենում եմ եզրափակել՝ կրկնելով Պողոս Առաքեալի Կողոսացիներին ուղղուած խօսքերը. «Ձեք դադարում աղօթել ձեր համար եւ խնդրել, որ լիակարգ ճանաչուծն ունենաք Աստուծոյ կամքի, ածենայն իմաստութեամբ եւ հոգեւոր հանձնարով»<sup>2</sup>: Իմաստութիւն, որը մեզ տրւում է աղօթքով, հայեցողութեամբ, հոգու մէջ Մխիթարչի հեղմամբ: «Որպէսզի կարողանաք ընթանալ արժանապարհ վարքով, հաճոյ լինելու համար Աստուծուն ածէն ինչու, պրոքրեւելով բոլոր բարի գործերում եւ ածելով Աստուծոյ ճանաչողութեան մէջ. ածրապնդուելով բոլոր ուժերով, ըստ Որ փառաւոր զօրութեան, որպէսզի կարողանաք զօրեղ լինել եւ համբերապար ու երկայնամիտ ածէն ինչու. ուրախութեամբ երախտագիտութիւն ծախուցելով Զօրը, որը մեզ կոչել է ծառանկցելու սրբերի վիճակին, լոյսի մէջ: Նա է, որ ապարեց մեզ խաւարի իշխանութիւնից եւ փոխադրեց մեզ Որ սիրեցեալ Որդու արքայութեան մէջ»<sup>3</sup>:

41. Թող պաշտպանի մեզ Աստուածածինը, Մայրն Աստուծոյ եւ մեր Մայրը, որպէսզի մեզնից իւրաքանչիւրը կարողանայ ծառայել Եկեղեցուն հաւատքի լիութեամբ, Սուրբ Հոգու պարզեւների եւ հայեցողական կեանքի միջոցով: Մեզնից իւրաքանչիւրը, կատարելով անձնական պարտականութիւնները, որոնք յատուկ են իրեն, իր մասնագիտութեան կամ իր արհեստի մէջ, եւ կատարելով իր վիճակի պարտականութիւնները, թող սրտի բերկրանքով փառաւորի Տիրոջը:

Սիրեցէք Եկեղեցին, ծառայեցէք նրան գիտակից բերկրանքով նրա՝ ով կարողացաւ այս ծառայութեանը նուիրուել յանուն Սիրոյ: Եւ եթէ տեսնելու լինենք ինչ որ մէկին, որն ընթանում է առանց յոյսի, էմմաւուսի երկու մարդկանց նման, մօտենանք հաւատքով – ո՛չ մեր անուկով, այլ՝ յանուն Քրիստոսի – վստահեցնելու համար, որ Յիսուսի խոստումը չի կարող չիրականանալ եւ որ Նա միշտ հսկում է իր Հարսի համար. երբեք չի լքի նրան: Խաւարն անցնելու է, որովհետեւ լոյսի որդիներ ենք<sup>4</sup> եւ կանչուած ենք անմահական կեանքի:

Եւ Աստուած չորացնելու է բոլոր արցունքները նրանց աչքերից, եւ մահն այլեւս չի լինելու, ո՛չ էլ ողբը, հեծեծանքը կամ վիշտը. որովհետեւ նախորդ իրականութիւններն անցած են լինելու: Եւ ասաց Նա, որ նստած էր գահին. «Ահա, ես նոր եմ դարձնում ամէն ինչ»<sup>5</sup>: Իսկ ինձ պատուիրեց. «Գրի՛ր, որովհետեւ այս խօսքերը հաւատարիմ են եւ ճշմարիտ»<sup>6</sup>: Եւ ասաց տակաւին. «Կատարուած է: Ես եմ Այբը եւ Քէն, սկիզբը եւ վերջը: Ով ծարաւի է, նրան կը տամ կենդանի ջրի աղբիւրից, ճրիաբար: Ով յաղթում է, կը ժառանգի այս իրականութիւնները, եւ ես նրա համար Աստուած կը լինեմ, իսկ նա իմ համար կը լինի որդի»<sup>5</sup>:

<sup>1</sup> Թվհ 15, 15

<sup>2</sup> Կղս 1, 9

<sup>3</sup> Կղս 1, 10-13

<sup>4</sup> Հմմտ. Եփս 5, 8

<sup>5</sup> Յյտ 21, 4-7

## ՕԳՆԻՐ ԱՅՍ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆԸ

Սիրելի հայրենակից,

նախեւանաջ կամենում ենք յոյս յայտնել, որ այս գրութիւնը գէթ որոշ չափով օգտակար եղաւ քեզ կամ քո մտերիմներին, հոգու լուսաւոր պահեր մտցնելով առօրեայ հոգսաշատ վազքի մէջ:

Մեր միակ նպատակը դա է. «Ծառայել Քրիստոնեայ Հայաստանին»: Դրա համար էլ գրութիւնները բոլորին տրամադրում ենք ամբողջովին անվճար, որպէսզի ամէն ոք հնարաւորութիւնն ունենայ ընթերցելու դրանք եւ դրանցից քաղելու իրեն հարկաւոր հոգեւոր սնունդը:

Մեր նպատակը դրամական շահ վաստակելը չէ: Այդուամենայնիւ, այս ծառայութիւնը կարիքն ունի բոլոր նրանց նիւթական աջակցութեանը, ովքեր ի վիճակի են դա անելու, նոյնիսկ նուազագոյն չափով, իւրաքանչիւր ոք իր կարողութեան սահմաններում: Եթէ կը կամենաս քո նպաստը բերել մեր հետագայ ծրագրերին, ահա սրանք են մեր հաշուեհամարները.

Դրամատուն	ARDSHININVESTBANK, Yerevan, Armenia
SWIFT	ASHBAM22
ՀՀ Դրամով	247230777770
Եւրոյով	247230777770 / 0049
ԱՄՆ Դոլարով	247230777770 / 0001
Հաշուետէր	KAZARIAN VAGE

Ճիշտ է, մեծ մեկենասութիւնները կարելոր են, բայց փոքրիկ նուիրատուութիւններն անգամ արժէքաւոր են գործը յառաջ տանելու համար: Նման են կաթիլներին, որոնք կուտակուելով՝ կարող են լցնել գաւաթը: Եւ կարող են ծնունդ տալ մեծ գրքերի, որոնք եղել են եւ մնում են մարդկային էակի հոգեւոր սնունդը:

Մեր գործունէութեանը, արդէն իրականացուած կամ ապագայի համար ծրագրուած ձեռնարկներին վերաբերուող որեւէ տեղեկութիւն ստանալու համար կարող ես գրել մեզ, գործածելով այս գրութեան երկրորդ էջում նշուած նամակատարի հասցէն: Սիրով կը պատասխանենք:

Մաղթում եմ ամենայն բարիք ի Տէր:

ՕՅԻՐ ԳՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

